

# «Ապառաժ»-ը 100 տարի առաջ եւ այսօր

## Բուլշեւիզմը ճուշիում

Միջնադարեան ճուշին յետ չմնաց Ռուսաստանի միւս քաղաքներից: Եւ էլ ունեցաւ իւր բուլշեւիկները: Եւ, որ գլխաւորն է, ճուշու բուլշեւիկները դրսից առաքւածներ, նորեկներ չեն, այլ տնաբոյս, հիմքով, արմատով շուշեցի: Այդ մարդիկ տարիներ շարունակ ապրել են մեր մէջ, մեզ հետ գործ են ունեցել եւ մենք նրանց չենք ճանաչել: Եւ այսօր, լսելով նրանց քարոզները, մտքերը, մարդ տարակուսանքի մէջ է ընկնում, իւր ականջների չէ հաւատում, չգիտէ ինքն է բուլշեւիկ եւ դրանց չէ հասկացել, թէ դրանք են մոգական գաւազանի մի հարաւածով վերածնել, կերպարանափոխել:

Բայց թողնենք դրանց անցեալը, տեսնենք ինչ են մտադիր ճուշիում անել: Որ ճուշու բուլշեւիկները 99 պորթի են, ոչ ոք չէ կասկածում: Այսպիսի մի միջավայր պետք է արտադրէ բնականօրէն ամենաթունդ, մաքուր բուլշեւիկներ: Նրանք արդէն հող էլ ունեն. հայոց ազգային դպրոցի անցեալ եւ այս տարւայ շրջանաւարտ տղաները, ինչ-

պէս եւ քաղաքի բանկերում եւ այլ հաստատութիւններում չաղ ռոճիկներ ստացող ծառայողները նրանց մասսան է հանդիսանում, որի վրայ հիմնւած ձեռնարկել են Աստուծոյ օրհնեալ ճուշու յեղափոխականացման: Արդէն ունեն իրենց օրգանը, որ շանթ ու կրակ է թափում աչ ու ձախ, օրիգինալ, սեփական ծրագիրներ առաջարկում Ռուսաստանի վերակազմութեան վերաբերեալ, դիմակազերծ անում Կերեսնկուն, Պլեխանովին եւ միւս հակայեղափոխական, դավաճան գործիչներին, այն էլ աւելի ստույգ փաստերով, քան Պետրոգրադի իւր համախոհները: Ունին եւ իրենց ճառագիտութիւնը, որոնք մարտելիոգի եւ ծափերի որոտի տակ լռեցնում են տարբեր մտածողներին, հակառակորդներին: Վերջապէս ունին աշակերտներից եւ աղախիկներից բաղկացած մի մասսա, որի օգնութեամբ ձգտում են բանւորական եւ գիււորական խորհրդում գերակշռել, յեղափոխութիւնն իրենց ձեռքին առնել:



Թող ուրախանան մեր քաղաքի սովեալները, նրանց համար մտածողներ են դուրս եկել. շուտով լիութիւն, առատութիւն կը լինի, աւերակներն էլ կը վերաշինեն: Ծտալլարի մեր առաքեալները շատ սպասեցնել չեն տայ քաղցած ժողովրդին. մօտ օրերում ամեն ինչ կանեն: Միայն դեռ հարկաւոր է ջախջախել հակայեղափոխական, ազգայնական Դաշնակցութեան, որ միացած թուրք բեկերի հետ դաւ է նկիւնում

յեղափոխութեան դէմ: ճուշու հեռատես, խորագետ աղաներից, կեղծիչներից շատերը բուլշեւիկների բոլոր ծրագիրները գառնացանք եւ պարապ խոսքեր համարելով եւ ամենից իրականը գտնելով Դաշնակցութեան դէմ մղած կռիւը, մեծ բաւականութեամբ, ինքնաբերաբար անդամագրում են այդ նոր կուսակցութեան: Յաջողութիւն մեր տնաբոյս բուլշեւիկներին:

Նետ

## Հանրապետական գրադարանը՝ չլուծված խնդիրներով



Համագործակցություն ԱՅ, ՀՀ եւ այլ երկրների գրադարանների միջեւ չկան. «Վերջերս հրավեր էինք ստացել մեկ-երկու Պետերբուրգ տեղի քաղաքային գրադարանի հետ համագործակցելու համար: Սակայն ֆինանսական խնդիրների պատճառով չկարողացանք գնալ»,- ասում է տնօրէնը: Գրադարանի աշխատողների խոսքերով՝ համագործակցություն գյուղական եւ քաղաքային գրադարանների հետ նույնպէս չկա, որը հիմնականում պայմանավորված է ֆինանսական միջոցների բացակայությամբ: Վերջիններս երբեմն մասնակցում են գրադարանում իրակացվող միջոցառումներին:

Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի անունը կրող հանրապետական գրադարանի խնդիրների շուրջ գրուցել ենք տնօրէն Անահիտ Բաղդասարյանի եւ գրադարանի աշխատակիցների հետ:

Մեսրոպ Մաշտոցի անվան գրադարանը հիմնվել է 1924 թ. դեկտեմբերին՝ ունենալով ընդամենը 2007 կտոր գիրք, 5 ընթերցող: Գրադարանային ֆոնդը այսօրվա դրությամբ 175.554 է (ռուսերենը՝ 105.539, իսկ հայերենը՝ 70.015), որից գրքերը՝ 153.255 կտոր: Ընթերցողների թիվը 3000-ից ավելի է: Գրադարանում գերակշռող խորհրդային ժամանակաշրջանի դասական գրականությունն է: Օտար լեզուների բաժնում հիմնականում գերակշռող ռուսերեն գրքերն են, որը գրադարանին մնացել է խորհրդային տարիներից, մի քանի կտոր էլ անգլերեն:

Գրադարանի տնօրէնը, կարելուրելով Արցախում հանրապետական գրադարանի դերը մշակութային ոլորտի զարգացման եւ մատաղ սերնդի դաստիարակման գործում, անդրադարձավ գրադարանի շենքային պայմաններին. «Գրադարանի շենքը շատ հին է եւ չունի բավարար պայմաններ: 1999 թ. առ այսօր ոչ մի վերանորոգչական աշխատանք չի իրականացվել: Գրադարանը հիմնանորոգման, կահավորման եւ ժամանակակից սարքավորումների եւ համակարգիչների կարիք ունի: Այժմ կահավորված է միայն ընթերցասրահը: Արցախյան պատերազմի ընթացքում հրետակոծությունների հետեւանքով վնասվել է գրադարանի շենքի մասնակարգը եւ գրապահոցների գրքերի հա-

մար բավարար ջեռուցման բացակայության պատճառով տարեցտարի գրքային ֆոնդը կորուստներ է ունենում: Դրանից խուսափելու միակ միջոցը նոր շենք կառուցելը կլինի»: Տնօրէնի տեղեկացմամբ՝ առաջիկայում նախատեսվում է գրադարանի նոր շենք կառուցել: Որպէս կենտրոնական վայր՝ գրադարանի տնօրինությունը ցանկություն ունի նոր շենքը կառուցել ներկայիս գրադարանի բակում:

Աշխատանքներ են տարվում գրադարանում էլեկտրոնային ընթերցասրահի ստեղծելու ուղղությամբ: Էլեկտրոնային ընթերցասրահի համար ձեռք է բերվել 4 համակարգիչ (ամերիկահայ բարերարի կողմից), սակայն ծրագրային կարգավորման խնդրի պատճառով դեռ չի օգտագործվում:

Չնայած համացանցի տարածվածությանը, այսօր գրադարանի ընթերցողների պակաս չունի թե՛ դպրոցականների, թե՛ երիտասարդների եւ թե՛ թոշակառուների շրջանակներում: «Դպրոցականները վերցնում են դպրոցական ծրագրով նախատեսված գրքեր, իսկ երիտասարդների եւ ուսանողների մեծ մասը նախընտրում է ավելի թեթեւ եւ ժամանակակից գրականություն: Թոշակառուները նույնպէս կան ընթերցասերների մէջ: Շատ ընթերցողներ էլ հաճախ այստեղ են գալիս համացանցից վերցված գրքերի ցանկով կամ որեւէ մեկի խորհրդով»,- նշում է գրքերի հայկական բաժնի գրադարանավարուհի Անահիտ Չաքարյանը:

Շատ գրադարանի հայերեն եւ ռուսերեն լեզուներով գրքերի բաժնի վարիչ Անահիտ Դադայանի՝ գիրք ընթերցողներ միշտ էլ կլինեն: «Վստահ կարող եմ ասել, որ նույնիսկ հիմա ընթերցողների թիվն ավելի է շատացել: Էլեկտրոնային գրքերն այսօր մեծ տարածում ունեն, քանի որ այն շատերի համար հեշտ հասանելի է: Բայց շատերի համար էլ ավանդական գիրքը մնում է անփոխարինելի»,- ասում է նա եւ ավելացնում, որ ցավոք շատ պահանջված գրքեր կան, որ բացակայում են գրադարանում:

Գրադարանը նոր գրքերով համալրվում է հիմնականում դրա համար նախատեսված գումարով՝ ԱՅ գործող միակ գրախանութից:

Բաժնի վարիչ Անահիտ Դադայանի խոսքերով՝ գրադարանի գրքերի հիմնական մասը հին է: Նոր գրքեր՝ հատկապէս մասնագիտական, դժվարությամբ են ձեռք բերվում. «Մասնագիտական գրքերը թանկ արժեն: Հատկապէս գումարի սահմաններում ամսվա մէջ միայն այդպիսի 3-4 գիրք կարող ենք գնել՝ յուրաքանչյուրից հիմնականում մեկ օրինակ, որը ստիպված թողնում ենք ընթերցասրահում»:

Նվիրատվություններ առանձին անձանց կամ կազմակերպությունների կողմից հազվադէպ են լինում՝ մեկ-երկու գրքի տեսքով: Աշխատակիցների պնդմամբ՝ կան գրողներ, որոնք գիրք հրատարակելու դէպքում գոնե մեկ օրինակ չեն տրամադրում գրադարանին, նախընտրում են վաճառել:

Գրադարանի աշխատողների համար մտահոգիչ է գրքերի նկատմամբ ընթերցողների վատ վերաբերմունքը: «Լինում են ընթերցողներ, որ գիրքը տանում են եւ վնասված

վիճակում հետ վերադարձնում՝ հաշվի չառնելով, որ դրա հետեւանքով հնարավոր է, որ եկող սերնդին չկարողանանք տրամադրել ամբողջական գիրքը»,- ասում է Անահիտ Չաքարյանը:

Հաճախ գրադարան այցելում են տարբեր երկրներից Արցախ ժամանած զբոսաշրջիկներ, հետաքրքրվում գրադարանի վերաբերվող զանազան հարցերով, եւ վերջում էլ, գրադարանավարուհի Անահիտ Եպիսկոպոյանի խոսքերով, նկարվում «Գրադարանային հնության հետ»: Ասում են, որ ուրիշ ոչ մի երկրում չեն հանդիպել նման պայմանների: Մտահոգվում են ու հետաքրքրվում՝ արդոք աշխատանքներ չեն տարվելու գրադարանում նորմալ պայմաններ ստեղծելու ուղղությամբ: «Որտեղից որտեղ են մտածում մեր գրադարանի մասին»,- կատակում է տիկին Անահիտը:

Այն հարցին, թէ ինչպիսի կցանկանային տեսնել գրադարանը մի քանի տարի անց, Անահիտ Չաքարյանը պատասխանում է. «Ժամանակակից համապատասխան սարքավորումներով նորակառույց գրադարան, նաեւ հարուստ եւ զարգացած էլեկտրոնային ընթերցասրահ»:

21 տարեկանից գրադարանում աշխատող Անահիտ Եպիսկոպոյանը սերտորեն կապված է իր աշխատանքին: Գրադարանը իր երկրորդ տունն է համարում, իսկ գրքերը՝ իր հարազատներն ու բարեկամները: Գրքերի հանդէպ վատ վերաբերմունքը խոր ցավ է պատճառում նրան: 40 տարվա աշխատանքային փորձ ունեցող կինը իր պատգամն ունի արցախցի բոլոր ընթերցողներին՝ ավելի շատ գրքեր կարդալ. «Սիրեք եւ գնահատեք «մեր բարեկամների»»: Գրքերը տալիս են գիտելիք: Նրանք զարգացնում են մարդու մտաւորիզոնը, երեւակայությունը, ընդլայնում նրա աշխարհայացքը, օգնում են նաեւ զարգացնել անհատականությունը: Գիրքը ձեր ամբողջ կյանքի ուղեկիցը դարձնելով՝ դուք միշտ կարող եք օգնել ինքներդ ձեզ եւ ուրիշներին»: Գրքերը կարող են խորհուրդ է տալիս համակարգիչներով աչքերը վնասելու փոխարեն զբաղվել ընթերցանությամբ, քանի որ ընթերցանությունը մարդու համար ժամանակը լավագույնս օգտագործելու հնարավորություն է:

ԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Ստեփանակերտի Ա. Ղուլպյանի անվան հ.2 հիմնական դպրոցի 2016-2017 ուսումնական տարվա շրջանավարտ Մարիամ Կարենի Բաղդասարյանին տրված ԱՆ175570 համարի հիմնական կրթության վկայականը: Վկայականը համարել անվավեր:

### ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

ՀՀ Արցախի կառույցի անունից մեր խորին ցավակցությունն ենք հայտնում ընկերուհի Ռուզաննա Աբրահամյանին եւ բոլոր հարազատներին իրենց կրած ցավի եւ անդառնալի կորստի՝ Նորա Աբրահամյանի մահվան կապակցությամբ:  
ՀՀ Արցախի ԿԿ

# Ոգեղեն Հայրենիք

## «Ցեղին սիրտը» եւ ցեղակրոնությունը

Սկզբը՝ նախորդ համարում



Ինչու՞ «Ցեղին սիրտ» կամ ցեղակրոնություն, ինչպե՞ս տարբերակել «ցեղ» եւ «ժողովուրդ» հասկացությունները: Մի կողմ թողնելով հասարակագիտական բնորոշումները, որոնք, ըստ էության, իմաստային տարբերակում չեն ընդգրկում, դառնանք Նժդեհին: «Ցեղը դիմագծորեն ազգայինն է, այն տիպականը, որով ժողովուրդները տարբերվում են իրարից... Ցեղն ավելի հոգի է, քան կավ: Ցեղի ոգու պեղումը, ժողովրդին ցեղորեն վերադաստիարակելու, ցեղի կերպը գրականությամբ ներկայացնելու հարցադրումները 20-րդ դարում ազգային գոյության նշանակության աստիճանի պահանջված էին: Ցեղակրոնությունն ընդգծում է ցեղի խորքը պեղելու, նրա հոգեւոր գործունեականությունը կիրարկելու, ցեղաճանաչությանը ցեղային ինքնագիտակցությունը բարձրացնելու, քրիստոնյա հոգեբանությունը վերանորոգելու ներքին ուղեգիծը: «Յայնությունը ցեղաճանաչությամբ միայն կարելիություն պիտի ստանա իր էության չգիտակցված եւ չիմաստավորված ուժերը լծելու մեր ցեղի վարած անհավասար գոյամարտի գործին», - գրում է Նժդեհը:

Ցեղային արմատների ընդերքում պահված հոգեւոր արժեքների հայտնաբերումը եւ՝ գրականության, եւ՝ ազգային գաղափարաբանության ուղղորդիչ խնդիրն է: Արդիական լույսի տակ պեղելու կիրարկել ցեղի ներքին արժեհամակարգը՝ ազգային կեցության նշանաբան

հռչակելով, ժողովրդին տալ ինքնահիշողություն եւ ինքնաճանաչություն, սերունդների պատմական շղթայում՝ գերպարտականության ինքնագիտակցություն, հասու դարձնել նրան իր ներքին ուժին, պարզել նրա ոգու նախաստեղծ հասակը. այստեղ է ոչ միայն Նժդեհի, այլեւ Վարուժանի ազգային գաղափարաբանության արժեկշիռը:

«Յայն միշտ էլ հերոսագործում է, երբ նրա առաջնորդներին հաջողվում է կռվի ընթացքում հավաքական սիրտ ստեղծել», - ասում է Նժդեհը: Վարուժանի պոեզիան ցեղի հավաքական սրտի խորհրդանիշն է, ցեղի դիմագիծը չկորցնելու, ցեղի ոգով սպառնալիքներ, ցեղից սոսկ բնակչության չվերածվելու գաղափարաբանություն: «Ժողովուրդը հաշվետես ուղեղ է, ցեղը՝ սիրտ, որ անհաշիվ կերպով զոհաբերել գիտես», - ասում է ցեղակրոնությունը: «Ես չուզեցի տեղ տալ իմ անհատական ցավերուս, - գրում է Վարուժանը, - գրեթե բռնի լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել Ցեղին սիրտը, որուն բախյունները կզգայի իմ մեջս, իմ սեփական արյունիս խորը: Յայնությունը կուլար եւ կը մռնչեր իմ մեջս»: Ժամանակակիցների կողմից Վարուժանը կոչվել է «Գրական ֆիդայի»: Ազատագրական պայքարի ժամանակ ֆիդայիները «Ցեղին սիրտը» փափուկուշի հետ կրում էին նաեւ իրենց մախաղներում:

Ցեղային ոգու վերարթնացումի գեղագիտական կողմնորոշումով հատկանշվող Վարուժանի պոեզիայում առանցքային է ռազմի ուժակշիռը: Վարուժանի խոսքն այսպիսի դեպքերում, գեղարվեստական ուղեգծից փոքր-ինչ շեղվելով, վերածվում է համազգային ռազմի գաղափարաբանության: «Տակավին պաշտումով կվերաբերվիմ կռվողներուն հանդեպ», - գրում է Վարուժանը 1907-ին: Այնուհետեւ՝ «Յայ գրագետի ապագան Յայաստանի ապագան է... Նպատակս. մութի մեջ է, ինչպես դեռ մութի մեջ է հայ ազատության դատը. ամեն լույս այս ամպին հերձումեն պիտի ցայտի... Իսկ բաղձանքս, բաղձանքս է ապագայի մարդերուն նվիրել այնպիսի հզոր երգ մը, որ հայրենիքը ինձի պես արարած մը ծնած ըլլալուն գոնե չզղջա»: Ցեղային գիտակցության գաղափարական ճանապարհին ցեղակրոնությունը նույնպես միտված էր թուրքի-

այից ունեցած մեր ազգային պահանջատիրությանը. «Թուրքը դեռ ծանոթ չէ մեր ցեղի բազկի ուժին, - ասում է ցեղակրոնությունը: - Նա գործ է ունեցել մեր ժողովուրդի, բայց ոչ ցեղի հետ: Նրա զենքի հաջողությունը սեփական ուժի լիությունից չէր, այլ՝ մեր ժողովրդի դիմադրության պակասից»:

Վարուժանի ռազմարվեստի մեջ որոշակի կշիռ ունեն մի շարք խորհրդանիշ բառ-պատկերներ՝ շանթ, բազե, առյուծ, արծիվ, որոնք տիպական են նաեւ Նժդեհի գաղափարաբանությանը եւ մեր ազատագրական պայքարի նշանոցային պատկերներից են: Ցեղի առյուծասիրտ հերոսների պաշտամունքի ինքնարտահայտություն է Վարուժանի «Յերոսները» քերթվածքը, որ եղեռնագոհ բանաստեղծի չարագրված պատառիկներից է. «Իրենց մարմինն ըսպիտակ՝ դյուցազներու կաղապար / 2որ քանդակել կրնալու համար պիտի մ՝ ուզեի / Գեթ օր մը լլալ ես Աստված...»: Ազատության բացարձակ գաղափարի պատկերակերտման գյուտով նշանավորվում է «Արծիվներու կարավանը» քերթվածքը՝ ձուլված հերոս նվիրյալներին. «Աստված իրենց գանգերուն մեջ կը բանտեն...»: Նաեւ այստեղից է սերում Վարուժանի պաշտամունքը առ Վահագնը, որ նույնն է, թե ուժապաշտությունը կամ արիապաշտությունը. «Ով դու Վահագն, ո՛վ աստվածն իմ հայրերուս, // Կ՛աղոթեմ ես... կ՛աղոթեմ... // Ուժին համար, կրոնքին համար բազուկիդ»: Ուժապաշտության գաղափարի սկզբունքին զինվորագրված Նժդեհը, շարունակելով Վարուժանի միտքը, գրում է. «Դու խաբված ես, ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնեական բարոյախոսության, որ շարունակում է մնալ որպես ներկ եւ չպար, որպես քող եւ դիմակ ուժեղների հոգու համար... Ուժեղինն է աշխարհը, հայրենիքը, ազատությունը եւ ամեն ինչ»:

Քրիստոսի հոգեւոր խաչի ճանապարհը Վարուժանը ներկայացնում է «Մատնված- տառապած- ապտակված- թաքնված- մահապարտ- խաչված Յիսուս» պատկերաշղթայով: «Մեռած աստվածներուն» քերթվածքում, ողբալով հին աստվածների մահը, բանաստեղծը գրում է. «Մարդն է ինկած գարշապարին տակ հըսկա // Խուլ Աստուծո մը հրեա...»: Թե Վարուժանի, թե Նժդեհի

գաղափարաբանության գերագույն պաշտամունքը հայրենիք-ցեղ բացարձակ արժեքն է. այստեղից նրանց աշխարհայացքային այլախոհությունը, արիապաշտ, քրիստոսամեթ գաղափարախոսությունը: «Պետք է կեղծ ու մոլար հայտարարել բոլոր կրոնները, բարոյականները, սկզբունքները, որոնք չեն դարձնում կուռ կամքեր, ուժեղ նկարագիրներ, արիներ, որոնք չզոյությունը ազգերին հաճախ է ստիպում դիմելու իրենց թշնամիների մեծահոգության», - ասում է Նժդեհը: «Ջարդը» բանաստեղծության մեջ, ներբողելով հերոսների արիական վարքը, Վարուժանը գրում է. «Յայրենիքի Սերը վեհ // Կրոնքը կը լլա հազարավոր կրոններուն...»: Աշխարհայացքային նույնատիպ դրսեւորում է «Բեզաս» քերթվածքը՝ «Ընկեր Մուրա- տին եւ իր ծիուն կայծակնավազ» ընծա-



յականով. «Կ՛ երգեմ // Արեգդեմ // Ազատությունը Մարդուն, եւ գերությունս Աստուծո...»:

Ցեղակրոնության գնահատության հարցում, անտեսելով ցեղայինից մարդկային գաղափարական ուղեգիծը, գրեթե միշտ շեշտը դրվում է նրա ազգային որակի վրա: Ցեղակրոնությունն ու «Ցեղին սիրտը» որքան ազգային, նույնքան համամարդկային բացառիկ գաղափարաբանություն են մշակույթի համաշխարհային արժեհամակարգում:

**Յողվածի ամբողջական տարբերակը տես «Ապառաժի» էլեկտրոնային կայքէջում**  
**Նարինե ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ,**  
**բ.գ.թ., դոցենտ**

## Լուռ հեղափոխություն ենք անում. Կորյուն Խաչատուրյան

6 ← Սկզբունքները որպես հիմք ընդունելով՝ պետք է երբեմն կշռադատված բացառություններ անել:

**Կյանքում բոլորն ունենում են ձախողումներ: Ո՞րն է ձախողումների հաղթահարման Ձեր բանաձեռը:**

-Ձախողումներից պետք է դասեր քաղել: Դա է իմ բանաձեռը: Ես իրականում ունեցել եմ շատ ձախողումներ: Նախ եւ առաջ ընդունել եմ, որ կատարյալ մարդ չի լինում, բոլորն էլ ունենում են ձախողություններ: Ընդունելու պրոցեսը բա-

վական երկար է տեւում, բայց պետք է ձախողումներից դասեր քաղել: Անձնական եւ պրոֆեսիոնալ առումով առաջ գնալու ամենաէֆեկտիվ տարբերակը ձախողումն է: Ընդունիր, լսիր եւ փորձիր դաս քաղել:

**Հասնում եք Ձեր բոլոր նպատակներին:**

-Պրոֆեսիոնալ առումով՝ այո, անկասկած, որովհետեւ գտել եմ իմ սիրած աշխատանքը՝ իմ սրտին մոտիկ ասպարեզը, եւ հանգիստ եմ:

Անձնական առումով՝ մի քիչ ավելի քիչ, որովհետեւ դեռեւս մաս չեմ կազմում Արցախի հասարակության: Չգում եմ, որ այստեղ որոշ բաների պակաս կա, որոնք որ կուզեի լցնեի իմ առօրյան՝ մշակույթային աշխույժ կյանքը, գիշերային կյանքը, փաբեր, սրճարաններ. ընկերական շրջապատս էլ համեմատաբար սահմանափակ է այստեղ: Բայց՝ լավ կլինի:

**Ինչպես հասկացա՞ Ձեր ապագան Արցախում եք պատկերացնում:**

-Իմ ապագան պատկերացնում եմ այնտեղ, որտեղ ես երջանիկ կլինեմ: Այս պահի դրությամբ՝ այստեղ երջանիկ եմ: Տեսնե՞ք: Ես ճամփորդող եմ, բայց լրացավ Արցախում գտնվելու երկրորդ տարին: Սա, կարելի է ասել, ամենից երկար ժամանակն է: Մեկական տարի էի մնում տարբեր երկրներում: Եթե արդեն երկրորդ տարին այստեղ եմ, ուրեմն մի պատճառ կա: Արդյո՞ք հողի կանչն է...

**Չորրեցե Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆԸ**

Լուռ հեղափոխություն ենք անում. Կորյուն Խաչատուրյան



Կյանքի փորձ ձեռք բերելու համար անհրաժեշտ է ապրել երկար տարիներ: Սակայն թուժած ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի երիտասարդ ղեկավար Կորյուն Խաչատուրյանի հետ կես ժամից քիչ տևած զրույցը կարող է դաստիարակել, ուսուցանել եւ փոխել հաստատուն տեսակետներ:

**-Յավատում եք արդյոք «հայրենի հողի կանաչ» հասկացությանը:**

-Մասամբ: Նախ՝ որովհետեւ շատ երկրներում եմ ապրել, շատ եմ ճամփորդել եւ երբեւէ կապված չեմ եղել որեւէ հողի հետ: Իմ երիտասարդությունն անցել է մի երկրում՝ Ֆրանսիայում, որտեղ հարեւանություն հասկացողություն չեմ ունեցել: Այդ առումով կասե՛ի՝ ոչ, բայց... ինչ-որ հետաքրքիր զգացողություն կա Արցախում: Ես իմն եմ համարում Արցախը, առանց կապվածության, ուղղակի իմը՝ իմ քաղաքը, իմ ժողովուրդը, իմ ազգի պատմությունը, պատմության գարգացումը: Ես ուզում եմ այդ ամեն ինչի մասնակիցը լինել:

Պատմությունն այնպես դասավորվեց, որ այս հողը մերն է, հետեւաբար՝ այդ, այդ առումով հավատում եմ «հողի կանաչին»:

**-Լրանում է Ձեր՝ Արցախում գտնվելու երկրորդ տարին: Երկա՞ր ժամանակ պահանջվեց, որ Արցախն ընդունի եւ ջերմացնի Ձեզ:**

-Կարելի է ասել, որ Արցախը դեռեւս ամբողջովին չի ընդունել ինձ: Երկխոսության մեջ ենք այս պահին՝ ընդունվել-չընդունվելու շուրջ են տարվում բանակցությունները:

Ընդհանրապես դա բարդ մեխանիզմ է:

Առաջին հերթին, խնդիրն իմ մեջ է: Ես, որպես հյուր, պետք է ադապտացվե՛ի՝ բարբառին, ռուսերենին, որը արցախյան բարբառի մասնիկ է հանդիսանում, լեզվամտածողությանը եւ, անշուշտ, մարդկանց: Մեծ ջանք եմ թափել: Իմ ադապտացիոն շրջանը բավական երկար տևեց: Դա պարզ պարզեցնել է:

Մյուս կողմից, խնդիրը հյուրընկալողների ու ընդունողների մեջ է՝ Արցախի մեջ է: Արդյոք ես իրենց մի մասնիկ էի, կամ՝ ոչ: Սկզբում, դժբախտաբար, ասացին՝ դու երբեք արցախցի չես դառնալու, ինչը ինձ մի քիչ զարմացրեց: Ինձ հասկացրին, որ մենք պատրաստ չենք օտարներին ներգրավելու՝ ոչ հայերին, սակայն այդ օտարների շարքին են պատկանում նաեւ հայաստանահայությունն ու սփյուռքահայությունը:

Ես ծնվել եմ մի երկրում, որտեղ սեւամորթ-ֆրանսիացի կա, արաբ-ֆրանսիացի, քրիստոնյա-ֆրանսիացի, մուսուլման-ֆրանսիացի, չինացի-ֆրանսիացի: Բոլորին իրենց որպես ֆրանսիացի են համարում ու նույնիսկ հերքում են ազ-

գային ծագումը: Մենք՝ ընդհակառակը: Նույնիսկ հայրենիք վերադարձած սփյուռքահային ենք դժվարանում լիովին մեր մասնիկը համարել: Երկար պրոցես է, որը համբերություն է պահանջում եւ քո, եւ տվյալ երկրի՝ այս պարագայում Արցախի համար: Ես չեմ նեղանում դրանից:

**-Արժե՞ արդյոք սկսել զրոյից:**

-Ոչ անընդհատ, բայց արժե: Եթե կյանքում նման առիթ է ընձեռնվում՝ անպայման:

**-Հարցազրույցներից մեկում նշել էիք, որ աշխատանքը ձեզ համար կյանք է, այսինքն՝ թումն կյանք է Ձեզ համար:**

- Թումն կյանքիս ամբողջականությունն է: Ես վաղուց թումն ուրպես աշխատանք չեմ համարում: Ես նույնքան ջերմ ու հանգիստ եմ ինձ զգում թումում՝ ինչքան տանը, նույնքան պիտանի՝ ինչքան տանը: Թումն իմ՝ Արցախ տեղափոխվելու պատճառն էր: Բացարձակապես չեմ զղջում ու չեմ փոշմանում:

Աշխատանքի բերումով կարողացել եմ իմաստավորել կյանքս: Ապրում եմ իհարկե կյանքս ապրելու, հաճելի ժամանակ անցկացնելու համար, բայց նաեւ կարելու խորհուրդ ունի աշխատանք՝ սերունդ ենք պատրաստում, լուռ հեղափոխություն ենք անում: Ես դրան շատ-շատ եմ հավատում:

**-Ի՞նչ է թումն սովորեցնում արցախցի պատանիներին:**

-Չէի ասի՝ որ գիտելիք: Բնականաբար, մենք ահագին նոր ու արդիական գիտելիքներ ենք տալիս երեխաներին, բայց մենք նաեւ հետեւողական ու շարունակական աշխատելու ենք սովորեցնում իրենց: Կարելիություն ենք տալիս նաեւ խմբակային աշխատանքին:

Մենք սովորեցնում եւ խրախուսում ենք Արցախի պատանիներին՝ ազատ մտածել: Դա ամենից կարելուն է, որովհետեւ ազատ մտածելակերպը բերում է ստեղծագործության, իսկ ստեղծագործությունը բերում է նոր գաղափարների:

Դժվարություն հարթահարելու, քայլ առ քայլ, կաթիլ առ կաթիլ առաջ գնալու մեխանիզմն ենք սովորեցնում իրենց: Սովորեցնում ենք հավատալ, որ բոլոր դժվարությունները հաղթահարելի են եւ որ դու անպայման առաջ կգնաս:

**-Սիրո՞ւմ եք երեխաներին:**

-Շատ: Փոքրուց եմ սիրելի թե ընտանեկան առումով եւ թե առհասարակ: Երեխան իր մեջ ունի ազնվություն, անմեղություն, եւ դրա վրա աշխատելը ինձ ահագին դուր է գալիս: Պատանի ժամանակ առիթ եմ ունեցել փոքր քրոջ, եղբոր, զարմիկների պահելու, եւ զբաղվելու, եւ օգնելու իրենց: Երբ մեծացա, սկսեցի անհատական պարագամունքների միջոցով երեխաների հետ աշխատանք տա-

նել տարբեր կենտրոններում, դպրոցներում, ճամբարներում: Երեխաների հետ շփումը ինձ համար շատ կարելու է:

Երեխաների հետ աշխատելը որքան հաճելի, այնքան դժվար ու պատասխանատու է: Պատանիներին շատ հեշտ է սխալ կամ ճիշտ ճանապարհի վրա դնել: Պետք է մանկավարժ ու միաժամանակ հոգեբան լինես:

**-Իսկ որո՞նք են Արցախի երեխաների՝ հաջողությանը հասնելու հիմնական խոչընդոտները:**

-Առաջին խոչընդոտը, անկասկած, ազատ մտածելակերպն է: Դժբախտաբար, այդ երեւույթը Արցախում մասսայական բնույթ է կրում: Շատ ինքնամոտի է, շատ վախեցած, ամոթով: Պետք է ազատել խոսքը, միտքը եւ նույնիսկ շարժը:

Արցախցիները՝ այնպես չէ, որ տեսել են աշխարհը կամ նույնիսկ իրենց երկիրը՝ Արցախը եւ Հայաստանը: Իրենք պետք է զգան, որ հնարավորություն ունեն ամեն տեղ լինելու եւ ամեն ինչ տեսնելու:

Դպրոցներում հաճախ եմ հանդիպել երեխաների, որոնք, ճիշտ է, շատ քաղաքավարի, զգույշ ու կարգապահ են, բայց իրականում այդ ամենը գալիս է նրանից, որ դժբախտաբար իրենց այդ ազատությունը չի տրված ու իրենք պետք է անընդհատ լռեն, հնազանդվեն ու չարտահայտվեն: Դեռ շատ սահմանափակ են մտածում: Քննական եւ քննադատական միտք զարգացնելու մեծ ներուժ եմ տեսնում Արցախում:

Շատ բաներ կապված են պատմության, մշակույթի, այս տարածաշրջանի հետ: Ես չեմ մոռանում, որ մենք պատերազմական գոտում ենք: Ապրիլյան պատերազմի ժամանակ եմ հասկացել, թե պատերազմը ինչպիսի հոգեբանական ազդեցություն կարող է թողնել, բայց մենք ի վերջո պետք է հասկանանք, որ մենք ոչ թե Արցախի մի մասնիկն ենք, այլ ամբողջ աշխարհի: Որ աշխարհը զարգանում է, ու մենք էլ պետք է կարողանանք այդ տեսլի մեջ մտնել: Տեսլի մեջ մտնելու համար էլ պետք է ընդունենք, որ կան տարբեր կարծիքներ, կան հակառակորդներ:

Արցախում քիչ եմ տեսել ըմբոստմարդկանց: Ոչ քաղաքական, ոչ մշակութային ցույց չենք տեսնում: Ամեն ինչ ընդունված, զրված, որոշված է այստեղ: Այդ ամենը բերում է վերը նշվածս խնդիրների:

Մեր երեխաների հետ կիսվելու դժվարություն ունեմ: Իրենք քիչ են կիսվում, բացվում, որոշ բաներ ամոթ են համարում, որոշ բաներ՝ տաբու: Ես կուզեի, որ խոսքը եւ շարժը բացվի: Դա կբերի մտածելուն:

**-Ինչպե՞ս է թումն պայքարում այդ խոչընդոտների դեմ:**

-Մենք կազմակերպում ենք դասընթացներ, արտասահմանից հրավիրում ենք մասնագետներ: Նրանց հետ շփում ստեղծելով՝ կարողանում ենք այդ շարժը ստեղծել: Ճապոնացին գալիս է թումն եւ կիսվում է իր աշխարհայացքով, խոսում է ճապոնական մշակույթի, մտածելակերպի մասին, եւ դա ինչ-որ չափով պատկերացում է տալիս երեխաներին:

Ունենք դասընթացներ, որոնք կազմակերպում ենք տարբեր գյուղերում: Վերջերս երկու ուսանողի հետ զննեցի ենք Մեդրի քաղաք՝ չրի պատրաստման պրոցեսը նկարելու: Երեխաները երբեմից չէին զննեցել Մեդրի: Հնարավորություն են ունեցել ծանոթանալ եւ շփվել հայրենիքի այդ հատվածում ապրող մարդկանց հետ:

Ինչ վերաբերվում է խոսելուն, ապա մենք մեծ կարեւորություն ենք տալիս կարծիքներին, լինի դա վարժանքի միջոցով, զրույցների, թե թումնում ստեղծած աշխատանքների: Ի վերջո, երեխաներն իրենց կարծիքն արտահայտում են իրենց ստեղծագործություններում՝ լուսանկարներում, ֆիլմերում ու ծրագրերում: Տարբեր միջոցներ ենք իրենց տալիս, որպեսզի կարողանան արտահայտվել:

Նկատել եմ, որ ուսանողները առաջին ամիսներին կաշկանդված են, ինքնամոտի, ամաչկոտ եւ լուռ: Բայց ունենք ուսանողներ, որոնք 3-րդ տարին են գալիս թումն, ու ակնառու ձեւով տեսնում ենք, որ իրենք ձեռք են բերել համարձակություն, ըմբոստություն, որ նրանք դարձել են ձգտող ու պահանջկոտ:

Խոչընդոտները մի կողմ թողնելով՝ կարող եմ վստահորեն ասել, որ Արցախի երեխաները հարգանքով են եւ կարգապահ: Ուղղակի աշխարհի հետ համընթաց քայլելու անհրաժեշտություն ունենք, պրոցեսի մեջ ենք եւ աշխատում ենք «խոչընդոտ ածականների» վրա:

**-Ո՞րն է թումնի հաջողության չափման միավորը:**

-Մեր ուսանողների հաջողությամբ: Եթե ուսանողը հասնի ու նվաճի հետաքրքիր դիրք կամ պաշտոն, ընդունվի աշխարհի լավագույն համալսարաններից մեկը, դա կլինի ինչ-որ չափով նաեւ մեր շնորհիվ: Նույնն էլ քիզնեսում է. Եթե հաճախորդը գոհ է, քիզնեսատերը հաջողում է: Թումնի հաճախորդներն ուսանողներն են: Ինչքան ես կարողանամ որակով ու լավ սերունդ պատրաստեմ, այնքան ես երջանիկ կլինեմ ու կհամարեմ, որ հաջողել եմ:

**-Նշեցիք, որ շատ երկրներում եք ապրել. Փարիզ, Թեհրան, Լոնդոն, Բեյլիա: Հետաքրքիր է՝ որքանով են ճամփորդություններն ազդում երիտասարդի զարգացման եւ կայացման վրա:**

-Շատ, ահավոր շատ: 15 տարեկան եմ եղել, երբ ֆրանսիական դպրոցում աշակերտների փոխանակման ծրագրի շրջանակներում 5 շաբաթով մեկնել եմ Ամերիկա՝ Բոստոն: Մանկության ընկերոջս ընտանիքն ապրում էր Նյու-Յորքում: Չանգեցի ծնողներս՝ ընկերոջս այցելելու խնդրանքով: Նրանք կտրուկ մերժեցին ինձ՝ ասելով, որ փոքր եմ, վտանգավոր է: Ես չգնացի ու մինչեւ հիմա զղջում եմ:

Ռիսկը, անորոշությունը ու անծանոթությունն ամենահաճելին է ճամփորդության մեջ: Միայնակ ահագին տեղեր գնացի՝ Ավստրալիայից մինչեւ Հարավային Աֆրիկա: Դա ինձ ահագին հասունացրեւ է եւ մեծ դեր է խաղացել ինքնակայացման, վախն ու դժվարությունները հաղթահարելու հարցում: Ինքնուրույն ու ինքնավստահ եմ դարձել ճամփորդությունների շնորհիվ:

**-Ապրում եք կանոններով եւ սկզբունքներով, թե՞ ենթագիտակցությունն ու զգացմունքներն են առաջնորդում Ձեզ:**

-Երկուսը: Յավատում եմ, որ արդար, ճիշտ ու հետաքրքիր սկզբունքներով մարդն ահագին առաջ կգնա: Մարդկային գործոնը ու զգացողական հարաբերությունները եւս կան, բայց դրանք պետք է բացառություն լինեն:

Չպետք է առաջնորդվել այս տարածաշրջանին բնորոշ բանաձեւով՝ նախ բացառություններ են անում, հետո հիշում սկզբունքները: Երբ երկիրը եւս պետք է որդեգրի եւ կիրառի սկզբունքներ, որպեսզի վաղը չէ մյուս օրը մեր կառավարությունից բռնած մինչեւ ամբողջ շուկան ավելի կանոնավոր լինի:

### Կին-սակրավորներ. Փշրելով բազմաթիվ կարծրատիպեր

2015 թվականի կեսերից Արցախում սկսել է աշխատել կին-սակրավորների առաջին թիմը: «Ոչ կանացի» գործում կանանց աշխատելու հնարավորությունը ընձեռնելու որոշումը հետապնդում է զբաղվածությունն ապահովելու եւ տղամարդկանց եւ կանանց միջեւ առկա կարծրատիպերը փշրելու նպատակ:

Մեկամսյա դասընթացները հաջողությամբ ավարտած կին-սակրավորների աշխատավայրը նախագուշացնող «Կանգնիր, ականներ» նշանից այն կողմ է: Ականադաշտը, որտեղ աշխատում է խումբը, Զառթաղի շրջանում է, Զարեգահ գյուղի հարեւանությամբ: Անտառի այս փեշին է հատվում կյանքի ու մահվան գիծը. նշված է կարմիր ձողերով:

#### Պատերազմի հետքերը վերացնելով ենք ուրվագծում բարի ապագան



Կին-սակրավորների առաջին ջոկատում ընդգրկված քույրիկին միշտ նախատող Նազելի Իսուկին՝ հետագայում ընտանիքը պահելու հոգան է ստիպել անցնել սակրավորի աշխատանքին:

«Քույրիկիս ասում էի, որ դա աշխատանք չէ կնոջ համար, վտանգավոր է, բարդ, որ կինը պետք է կանացի լինի եւ իր երեխաների գլխին կանգնած, բայց կյանքն այնպես դասավորվեց, որ իմ իսկ նախատումները հետ չպահեցին ինձ. պետք էր աշխատել», - ասում է Բերձորում բնակվող Նազելին:

Աշխատանքից այնուամենայնիվ դժգոհ չէ, արդյունքը բարի է՝ ականագերծում են իրենց իսկ տարածքները եւ ապահովում գյուղացիների անվտանգությունը:

«Ուրախ եմ, որ կարող եմ իմ տարածքի բնակիչներին օգտակար լինել: Եթե տղամարդիկ առաջնագիծը պահելով են ապահովում բնակչության անվտանգությունը, ապա մենք պատերազմի հետքերը վերացնելով ենք նշմարում բարի ապագան: Մեր երեխաներին էլ մնում է սովորել, որպեսզի հայրենիքին արժանի զավակ դառնան», - նշում է կրթությամբ մանկավարժ կին-սակրավորը:

Մեկամսյա դասընթացը Նազելիի մոտ հետաքրքրություն է առաջացնել

մանավանդ աշխատանքի բարդության տեսանկյունից: Հայտնի չէ, թե ինչ է ազդանշանի տակ՝ երկաթե կտոր, մեխ, թե ական:

«Ազդանշանի դեպքում մտածում եմ գինձառայող որդուս եւ երկու անչափահաս զավակներիս մասին, մտածում եմ, որ պետք է կենտրոնանամ աշխատանքիս վրա: Ես իրավունք չունեմ երեխաներիս համար ավելորդ խնդիր դառնալու: Չգուշ լինելը ամենակարեւորն է սակրավորի աշխատանքում, - պատմում է Նազելին, - սակրավորը մի անգամ է սխալվել, որ այս աշխատանքն է ընտրել, երկրորդ անգամ սխալվելու հնարավորություն չունի: Դա կլինի ճակատագրական սխալ»:

#### Մեկ րոպե հանգիստ ունենալու դեպքում թերթում է զավակների լուսանկարները

Զառթաղի շրջանի Զարեգահ գյուղին հարակից տարածքներում ականագերծման աշխատանքներն իրականացվում են 2003 թվականից: Յոթ երեխաների մայր Նարինե Ասատրյանը 2003 թվականին է որպես վերաբնակիչ հաստատվել Զարեգահ գյուղում: Պոպոկ, մասուր եւ այդ տարածքների այլ բարիքներ հավաքելու ժամանակ Նարինեն երբեմն հանդիպում էր աշխատող սակրավորների:

«Մտածում էի՝ տեսնես աղջիկների չեն ընդունի իրենց մոտ աշխատելու: Որպես սակրավոր աշխատելու ցանկությունս այդ ժամանակվանից է առաջացել: Երբ իմացա կին-սակրավորների խումբ հիմնելու ծրագրի մասին, անմիջապես դիմեցի», - պատմում է Նարինեն:



Դժվարությունները հաղթահարող եւ խիզախ. հենց այս որակների պատճառով են յոթ զավակները թույլ տվել իրենց մայրիկին անցնել կարմիր ձողերից այն կողմ՝ ականորսիչով աշխատելու: Երեխաների հանդեպ կարոտը Նարինեն զգում է հատկապես այստեղ: Մեկ րոպե հանգիստ ունենալու դեպքում՝ թերթում է զավակների լուսանկարները, առնում է կարոտն ու անցնում գործի:

«Այս տարածքներում շատ անասուններ են տուժել ականներից: Մարդիկ էլ դրանցով են ապրում, գոյատևում: Մեր

գործը նպաստում է մարդկանց եւ նրանց տնտեսության ապահովությանը», - ասում է Նարինեն:

#### Վախը մեր աշխատանքի ուղեկիցն է

Սահակյանը մասնագիտությունն ընտրել է թերահավատներին ապացուցելու համար, որ աղջիկներն էլ ի վիճակի են ամենածանր գործերը կատարել: Այսօր իր երկու երեխաներն ապահով են, եւ ոչ մի բանի կարիք չունեն. դա էլ ամենակարեւորն է համարում:



«Վախը մեր աշխատանքի ուղեկիցն է, բայց եթե գործի լավ ես տիրապետում ու ամեն ինչ ճիշտ ես կատարում, խնդիր չի առաջանում», - ասում է Վարդիթերը:

Հինգ օր աշխատանքի է, երկու օր տանը: Զարեգահի անտառներում աշխատող կնոջ դեմքին շարքը պարտադիր պայման է:

«Տարբերություն չունի, թե կինը ինչ աշխատանք է կատարում եւ որտեղ: Ձգտում եմ միշտ լինել գեղեցիկ», - ժպիտը դեմքին ասում է կին-սակրավորը, նշում նաեւ, որ առօրյան ուրախ է անցնում, քանզի կոլեկտիվի բոլոր անդամները որպես ընտանիքի անդամ են ընդունում իրար:

«Արցախը մի վայր է, որտեղ միշտ առկա է պայքարը՝ պայքար ընտանիքը պահելու, պայքար սահմանները պահելու, պայքար անվտանգությունը ապահովելու: Ամեն մարդ ինքն է որոշում, թե ինչպես է օգտակար լինելու հայրենիքն եւ որն է լինելու իր պայքարը: Իմ որոշումը՝ ականապատ տարածքները մաքրելն է», - նշում է Վարդիթերը:

#### Այս տարածքը ականագերծելուց հետո կանցնենք հաջորդին

Լուսինե Ասրյանը Ասկերանի շրջանի Ուղտասար գյուղից է: Արցախյան պատերազմի ժամանակ Լուսինեի հորեղբայրը սակրավորների խմբի հրամանատարն էր, եւ զոհվել է ականագերծման ընթացքում: Հորեղբոր կիսատ թողած գործն այսօր շարունակում է Լուսինեն:

«Մաքրել ենք 27, 289 քառակուսի մետր տարածք եւ գտել ենք 16 ական», -

հպարտությամբ նշում է գրուցակիցս:

Աշխատանքը հեշտ է, դժվարը ընտանիքի համաձայնությունը ստանալն էր. համոզեց եւ անցավ աշխատանքի:

«Վտանգին սպասում ենք ամեն րոպե: Հավանականությունը մեծ է. ականագերծվող տարածքների հարեւանությամբ 90-ականների սկզբին հակառակորդի դիրքերն են եղել», - պատմում է Լուսինեն եւ նշում, որ այս տարածքը ականագերծելուց հետո կանցնեն հաջորդին:

● Halo Trust-ն ականագերծման աշխատանքներ է իրականացնում Լեռնային Ղարաբաղում, Կամբոջայում, Մոզամբիկում, Սոմալիում, Շրիե Լանկայում, Երիտրեայում, Աբխազիայում, Չեչենիայում, Կոսովոյում, Անգոլայում եւ Աֆղանստանում: Կազմակերպությունը հիմնադրվել է 1988թ. եւ առաջին անգամ սկսել է գործունեություն ծավալել Աֆղանստանում, որտեղ հազարավոր քաղաքացիական անձինք զոհվում կամ վիրավորվում էին հողի տակ թաքցված ականների հետեւանքով:

● 2000 թվականից ի վեր Արցախում ականագերծման աշխատանքներ իրականացնող «The Halo Trust» բրիտանական կազմակերպությունը բավականաչափ ֆինանսավորում ունենալու դեպքում նախատեսում է 2020 թվականին ավարտին հասցնել ականագերծման ծրագիրը:

● «The Halo Trust» կազմակերպությունում ականագերծում են իրականացնում շուրջ 130 սակրավոր, որոնցից 11-ը՝ կանայք:



● 1995 թվականից մինչեւ 2017թ. նոյեմբերի 20-ը տեղի է ունեցել 288 դժբախտ պատահար (188 ականներից, 93 չպայթած զինամթերքից), որոնց հետեւանքով տուժել է 374 մարդ:

● «The Halo Trust» կազմակերպության գործունեության ընթացքում Արցախում ականագերծվել է ավելի քան 4,683 հա տարածք, իսկ կասետային ավիառումբերից մաքրվել է ավելի քան 25.423 հա տարածք, որի հետեւանքով հայտնաբերվել եւ ոչնչացվել է՝ 11 490 ական 12 467 կասետային ավիառումբ եւ 48 953 չպայթած զինամթերք:

### Այսօր չկա որեւէ խնդիր, որին հայրենիքի պաշտպանությունը կարելի է ստորադասել



Վերջերս լույս է տեսել Արցախի ՊԲ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Սուրեն Սարումյանի «Ստվերներով լի քաղաք» գիրքը: Այն հեղինակի արդեն երկրորդ հրատարակված գիրքն է՝ «Աբու Բաքր ալ Բաղդադի» Շամի խալիֆը» վեպից հետո: Ընթերցողի դատին հանձնված երկու գրքերն էլ դրական մեծ արձագանք են գտել: Բայց ինքը՝ Սուրեն Սարումյանը, իրեն գրող չի համարում, գրական ջիղը բացահայտելու տարիքն էլ պայմանական է համարում:

Եթե վերցնենք ընդհանրապես գրելը, դա վաղուց էր, իսկ թե երբ է սկսում գրվածքը գեղարվեստական արժեք ձեռք բերել, դա բարդ է ասել: Կոնկրետ վերջերս լույս տեսած գրքի պատմվածքները վերջին 3-4 տարվա ընթացքում են գրվել:

Սուրենը ծնվել է շինարարի ընտանիքում՝ Երեւանում, հետո ընտանիքով տեղափոխվել են Արտաշատ, 1988-ին էլ՝ Արցախ:

Մեր ընտանիքում միայն ես եւ կրտսեր քույրս ենք ծնվել Երեւանում, իսկ մյուս երեխաները արձակուրդների շրջանում Արցախում են ծնվել: Երեւանում ապրելու ժամանակ ամեն ամառ եւ ձմեռ արձակուրդներն անցկացնում էինք հորս ծննդավայրում՝ Սեյրիջենում (այժմ՝ Խաչեն): Հայրս զինվորական ծառայությունից հետո մնացել է Երեւանում: Արցախյան շարժման օրերին՝ 1988թ. որոշել է՝ «վերադառնում եմ մեր երկիրը»:

Չինվորական մասնագիտության ընտրությունն էլ նախասիրության հարց էր:

Միշտ էլ զինվորական մասնագիտությունը հրապուրել է ինձ: Տղամարդուն վայել բազմաթիվ գործեր կան. զինվորական լինելն էլ ամենալավներից ու պատվաբերներից մեկն է:

Չինվորական, լրագրող, գրող Սուրեն Սարումյանը դժվարությամբ է իրեն բնորոշում, որովհետեւ, ըստ նրա, թվարկվածները մեկը մեկից տարանջատել չի կարելի: Բայց իրեն առաջին հերթին զինվորական է համարում:

Մեկը մեկին չի խանգարում: Բացի դրանից, կարծում եմ, որ այսօր չկա որեւէ խնդիր, որին հայրենիքի պաշտպանությունը կարելի է ստորադասել: Մենք ապրում ենք մի տարածաշրջանում, երբ բոլորս գիտենք, որ ցանկացած պահի մարտական գործողությունների վերսկսումը կարող է իրականություն դառնալ: Դա մեր աշխարհագրական դիրքի, հարեանների առկայությունն է, որն օբյեկտիվ իրականություն է: Այսօրվա դրությամբ, իմ խորին համոզմամբ, մեր ամենակարեւոր գործը սահմանների պաշտպանությունն է: Եթե զինվորականը դա կատարում է համազգեստով եւ իր դիրքում, ապա աշակերտն էլ կատարում է լավ սովորելով: Բոլորն էլ նույն խնդրին պետք է լծված լինեն:

Վերջերս լույս տեսած «Ստվերներով լի քաղաք» գիրքը, ինչպես գրականագետ Հասմիկ Հակոբյանն է նկատել,

նոց որ ստվերների տիեզերք լինի: Այս դեպքում կյանքն այսպես է ընկալվում:

Ստվերները մարդիկ են. այն կաղապարները, պայմանականությունները, հասարակության այն ճշումը, որը կարծես թե չի երեւում, անտեսանելի է, բայց որի հետ մարդը բախվում է ամբողջ կյանքի ընթացքում, հաշվի է նստում, երբեմն հաղթում, երբեմն պարտվում: Ստվերները անցյալի հուշերն են, այն, ինչ հիմա չկա, բայց մարդուն շատ ժամանակ ավելի է ուղղորդում, քան ներկան:

Այն մեր իրականության արտացոլումն է:

Ընդհանրապես գրականության մեջ կա մի հետաքրքիր երեւույթ: Եթե գրողը գրում է պատմավեպ, որը ենթադրեց արժարժում է 2000 տարի առաջվա դեպքերը, միեւնույնն է՝ ահագին մասով գրում է հենց այսօրվա մասին: Սյուժեն կամ ժամանակաշրջանը այնքան էական չեն՝ իմ կարծիքով: Միայն այն փաստը, որ մարդն ապրում է տվյալ ժամանակաշրջանում, նշանակում է, որ անցյալի կամ ապագայի մասին գրելիս ինքն իրականում միշտ պատմելու է ներկայի մասին:

Նախորդ տարի լույս տեսած «Աբու Բաքր ալ Բաղդադի» Շամի խալիֆը» վեպն արդի ռազմաքաղաքական հիմնախնդիրների գեղարվեստական արտացոլման օրինակ է, որտեղ բնականորեն միախուսվել են իրականն ու երեւակայականը: Այնտեղ ներկայացված է Իսլամական պետության առաջնադարում, որի շոշափուկները հասնում են մինչեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության սահմանագոտի... Սակայն հեղինակը ինքնին իսլամից սպառնացող վտանգ չի տեսնում քրիստոնեության եւ, մասնավորապես, հայերի համար:

Մեր հարեան Իրանը իսլամական առաջատար պետություններից մեկն է, որը Հայաստանի անկախության առաջին օրվանից ի վեր Հայաստանի վստահելի գործընկերներից է եւ կրոնական որեւէ հարց հայ-իրանական հարաբերություններում պարզապես գոյություն չունի: Կա փոխըմբռնում բոլոր ոլորտներում: Սիրիան, Լիբանանը, Եգիպտոսն էլ են իսլամական պետություններ:

Իսլամը ինքնին վտանգավոր չէ, վտանգ են ներկայացնում այն մարդիկ, ովքեր իսլամը սխալ են մեկնաբանում, կամ օգտվելով իսլամական պետություններում ժողովրդի ոչ գրագետ վիճակից, որտեղ սոցիալական պարարտ հող կա արմատական շարժումների ձեւավորման համար, օգտագործում են իրենց քաղաքական նպատակներով:

Նույնը Ադրբեջանի մասին ասել չի կարելի, որովհետեւ Սուրեն Սարումյանը Ադրբեջանն իսլամական պետություն չի համարում:

Ծիշտ է, այնտեղ արմատականացման որոշակի միտում կա, որովհետեւ իսլամական պետության շարքերում ազգությամբ բազմաթիվ ադրբեջանցիներ են կռվում, բայց ադրբեջանական պետությունը կրոնական չէ: Նա մեր հակառակորդն է, բայց երբեք Ղարաբաղյան ազատամարտը չի կարելի համարել քրիստոնեության եւ իսլամի պատերազմ: Չնայած Արցախյան առաջին պատերազմի տարիներին Ադրբեջանն այդ գործուն էլ փորձեց օգտագործել, երբ ջիհադի կոչերով Աֆղանստանից հարյուրավոր, հազարավոր մոջահեդների ներգրավեց այս շարժման մեջ: Ամեն դեպքում՝ այդ երանգավորումն ինչ-որ չափով կա, բայց կրոնական հակամարտություն չէ: Ադրբեջանն էլ չի կարելի համարել իսլամական պետություն: Նրանց ոչ էլիտան է իսլամի օրենքները պահպանելով ապրում, ոչ էլ ժողովրդի բացարձակ մեծամասնությունը:

Ինչ վերաբերում է օտար լեզուներով գրքերի թարգմանությանն ու տարածելուն, ապա հեղինակը գտնում է, որ շտապել պետք չէ:

«Աբու Բաքր ալ Բաղդադի» Շամի խալիֆը» գրքի ռուսերեն թարգմանությունը պատրաստ է, բայց դեռ չիս-

բագրված վիճակում է: Անկեղծ ասած, նաեւ զինվորականի իմ կարգավիճակն ինչ-որ չափով թույլ չի տալիս հետեւողական կերպով զբաղվել դրանով: Նաեւ գտնում եմ, որ գրականությանը չպետք է շտապեցնել: Ընդհանրապես, գրական գործընթացը հանդարտ գործընթաց է, անգամ հանրահայտ դառնալը, թարգմանվելը կամ օտար երկրներում ներկայացվելը ժամանակ պահանջող գործ է: Կարգապես պետք է համբերությամբ լցվել ու սպասել: Իսկ արժեքավոր գրականությունն անպայման ինքն իր համար ճանապարհի կհարթի: Արհեստական ինչ-որ ստիմուլներ չեն կարող օգնել, որ վատ գիրքը լավ դառնա եւ հակառակը:

Մերօրյա գրական արժեքավոր գործերն ընթերցողների լայն շրջանակներում չտարածվելու պատճառներից մեկն էլ համարում է այն, որ մեծ մասի մոտ ընդհանրապես կորել է հետաքրքրությունը գրքի նկատմամբ:

Դա ունի իր պատճառները: Առօրյան այնքան հագեցած է, պարտականությունները շատ, որ մի մեծ մաս դրան ուղղակի ուշադրություն չի դարձնում կամ համարում է, որ առանց ընթերցանության էլ կարող է «յուր գնալ»: Բացի դրանից, համացանցում ահագին գրականություն հասանելի է, շատերը նախընտրում են կարդալ էլեկտրոնային տարբերակով: Եթե համեմատենք աշխարհի ուրիշ երկրների հետ, իմ կարծիքով՝ ընթերցողների եւ ընթերցողների թվային հարաբերակցությունը մոտավորապես նույնն է լինելու: Պարզապես մեր բնակչության թիվը թելադրում է որոշակի սահմանափակում: Օրինակ, Հայաստանում 500.000 տպաքանակով գիրք ոչ կարող է տպվել, ոչ էլ վաճառվել: Նման տպաքանակներ կարող են գոյություն ունենալ միայն դասագրքերի դեպքում: Եթե մենք ուզում ենք հայ գրականությունը որպես խոշոր գրականություն տեսնել, պետք է մեր հայացքը թեքենք դեպի դուրս, իսկ դա էլ առանց պետական աջակցության հնարավոր չէ՝ ոչ այնքան գիրքը տպագրելու առումով, որքան այդ գիրքը դրսույն ներկայացնելու, ինչ-որ արժանի կազմակերպելու, տարածելու առումով:

Երիտասարդ գրողի կարծիքով՝ հայ գրականության ոսկեդարը չի կարելի անցած համարել:

Յուրաքանչյուր պատմական ժամանակահատվածում կա որոշակի շրջան, որը կարելի է համարել ոսկեդար: Ինչ պակաս ոսկեդար է այն շրջանը, երբ ապրում էին, ասենք, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Եղիշեն: Ինչ պակաս ոսկեդար էր, երբ կային Հովհ. Թումանյանը, Եղիշե Չարենցը, Վահան Տերյանը, Ավետիք Իսահակյանը: Ինչ պակաս ոսկեդար էր, երբ կային Հրանտ Մաթեոսյանը, Համո Սահյանը եւ ուրիշներ: Հիմա էլ կան հրաշալի, տաղանդավոր գրողներ. չեն կարծում, թե ոսկեդարի խնդիր կա: Ուղղակի մեր գրականությանը պետք է կտրվել գուտ ազգային կաղապարներից եւ անդրադառնալ նաեւ այն հարցերին, որոնք հետաքրքրում են ցանկացած մարդու՝ անկախ ազգությունից: Այստեղ օբյեկտիվ պատճառ էլ կա՝ անցած դարի մեր ժողովրդի պատմությունը, արհավիրքները: Իհարկե, չէր կարող Յեղսապատությունից անմիջապես հետո գրողը հանգիստ խղճով այլ թեմայի անդրադառնալ: Հատկապես արձակում թեմաների որոշակի միանմանություն կա: Օրինակ, հայկական ռոմանտիզմի ներկայացուցիչ Բաֆֆին ազգային գաղափարախոսությունը դրել է պատմական հիմքի վրա, պատմական կերպարների միջոցով իր հայրենապիական տեսակետներն է քարոզում: Իհարկե, այն ժամանակ միանշանակ դա էր պետք, որովհետեւ կար ազգային-ազատագրական պայքարի խնդիր, որը հետագայում վերածվեց ազգի լինելու-չլինելու խնդրի: Իսկ հիմա հայ գրականությունը պետք է իր հայացքն ուղղի դեպի համաշխարհային գրականության ծիրը:

Տարբերակ ԱՐԱՋԱՆՅԱՆ

### «Թեւանիկ» խմբի հերթական օժանդակությունն Ուղտասարին

Յերթական անգամ Արցախում են Իրանի «Թեւանիկ» խմբի անդամները: Նոյեմբերի 25-ին կարելի էր առաքելությանը ժամանած անդամներն այցելել են Անկերակի շրջանի Ուղտասար համայնք՝ դպրոցի համար համակարգիչներ եւ մարզական պարագաներ, իսկ դպրոցականներին՝ մարզական հագուստի տեսքով նվերներ հանձնելու նպատակով:

«Թեւանիկ» խմբի անդամների այցը գլխավորում էին ԱՀ Աժ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Ալյոշա Գաբրիելյանը եւ ՀՀ Արցախի ԿԿ անդամ Կամո Բարսեղյանը:

Նախ Ալյոշա Գաբրիելյանը միջոցառմանը ներկա ուղտասարցիներին եւ հրավիրվածներին է ներկայացրել «Թեւանիկ» խմբի՝ Արցախում իրականացրած ծրագրերը, ապա խոսքը փոխանցել խմբի օժանդակող անդամ Անահիտ Բեգլարյանին:

«Առաջին անգամ չենք Ուղտասարում, եւ վստահ եմ՝ ոչ

վերջին անգամ: Մեր հնարավորությունների չափով օժանդակելու ենք արցախցիներին եւ մեր ներդրումն ենք ունենալու Արցախի տնտեսության զարգացման գործում», - նշել է Ա.Բեգլարյանը:

Ուղտասարի դպրոցի տնօրեն Վլադիմիր Հակոբջանյանը շնորհակալություն է հայտնել Իրանի խմբի անդամներին եւ նշել. «Տարիներ շարունակ դպրոցն ուներ համակարգիչների եւ մարզական պարագաների խնդիր: Այսօր երազանքների իրականացման օր է»:

Փոքր դպրոցում է փայտե վառարանների ծխի ներքո դասերն անցկացնող ուղտասարցի դպրոցականները հաշորդ տարվանից հաճախելու են նոր դպրոց: Դպրոցի շինարարությունն ընթացքի մեջ է, համակարգիչներն ու մարզական պարագաներն այլեւս երազանք չեն, տոնածառի մասին մտածելու կարիք եւս չկա. «Թեւանիկ» խումբը երկու տոնածառ է նվիրել դպրոցին, որոնք միասնական ուժերով զարդարվել են միջոցառման վերջում:



### ՀՀ-ԵՄ. Եվրասիական գործընթաց

Անցած շաբաթվա քաղաքական անցուղարձում մեզ համար անհամեմատ նշանակալի իրադարձությունը, անշուշտ, Հայաստանի Հանրապետություն-Եվրամիություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումն էր, որ տեղի ունեցավ նոյեմբերի 24-ին՝ Բրյուսելում, Արևելյան գործընկերության երկրների 5-րդ գագաթնաժողովի շրջանակներում: Փաստաթուղթը, որի նախագիծը շուրջ 15 ամիս գտնվում էր բանակցությունների սեղանին և նախատորագրվել էր այս տարվա մարտին, իրականում համագործակցության առաջին համաձայնագիրն է, որը ստորագրվում է Եվրոպական միության (ԵՄ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ երկրի միջև:

Նույն օրը Բրյուսելում ստորագրվել է եւս մեկ փաստաթուղթ՝ Տրանսերոպական տրանսպորտային ցանցի՝ դեպի ՀՀ ընդլայնման բարձր մակարդակի փոխըմբռնման արձանագրությունը, ինչպես նաև նախատորագրվել է ՀՀ և ԵՄ միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագիրը: Դրանցից առաջինը միտված է ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների միջև տրանսպորտային հարողորակության արդյունավետության բարձրացմանը, համատեղ ենթակառուցվածքային առաջնահերթությունների նախանշմանը և տրանսպորտային ցանցերի զարգացմանը, իսկ երկրորդը, կողմերի համար սահմանվող մի շարք առավելությունների թվում, նախատեսվում է նաև Հայաստանի կողմից Եվրամիության միասնական ավիացիոն գոտուն միանալու, ինչպես նաև Հայաստանում ավիացիոն ոլորտում երրորդական լավագույն փորձը ներդնելու հնարավորություն:

Սակայն անդրադառնալով Բրյուսելում ստորագրված գլխադաս փաստաթղթին՝ ՀՀ և ԵՄ միջև գործընկերության համաձայնագրին, որը, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գնահատմամբ, արտացոլում է երկկողմ փոխգործակցության վերջին շրջանի նշանակալի զարգացումները և սահմանում դրանց խորացման համար անհրաժեշտ ուղենիշները: «Համաձայնագրի հիմքում ընկած են ժողովրդավարության արմատավորման այնպիսի կարեւոր դրույթներ, ինչպիսիք են իրավունքի գերակայությունը, արդարադատության ամրապնդումը, պետական և հասարակական ինստիտուտների զարգացումը, լավ կառավարումը», -ասել է նա:

Բայց արդյոք, ՀՀ-ԵՄ համաձայնագիրը կարող է լիարժեք, առանց արտաքին խոչընդոտների և արգելափակումների գործել ԵԱՏՄ պայմանագրին միանալու մասին Հայաստանի պայմանագրին զուգահեռ:

Ինչպես հիշում եք, ԵԱՏՄ պայմանագիրը գործում է 2014թ. մայիսի 29-ից և ի սկզբանե միավորում էր երեք հիմնադիր երկրների՝ Բելառուսը, Ղազախստանը և Ռուսաստանը: Հայաստանը հետխորհրդային նորաստեղծ կառույցին նույն կարգավիճակով միացավ մի քանի ամիս անց՝ 2014-ի հոկտեմբերի 10-ին, Մինսկում ստորագրելով համապատասխան պայմանագիրը, որն առ այսօր ուժի մեջ է՝ սկսած 2015-ի հունվարի 2-ից: Մինչ այդ՝ դեռևս 2013թ. հոկտեմբերի 24-ին նշված չորս երկրների ղեկավարները հանդես էին եկել երասիական ինտեգրման գործընթացին Հայաստանի մասնակցության վերաբերյալ հատուկ հայտարարությամբ:

Սակայն, առաջնորդվելով իր որդեգրած համակենցության սկզբունքով և այդ հիման վրա վարելով բազմակետոր, կոմպլեքսնետար քաղաքականություն, Հայաստանն ի սկզբանե հակված է փոխշահավետ քաղաքական ու տնտեսական կապեր պահպանել նաև երրորդական ուղղության այլ երկրների ու միջազգային

կառույցների հետ: Տակավին 1996թ. ապրիլի 22-ին պաշտոնական Երեւանը Լյուքսեմբուրգում ստորագրել էր Եվրամիության հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը: Կոչված լինելով կարգավորելու ՀՀ-ԵՄ հարաբերությունների գրեթե ողջ սպեկտրը, բացի ռազմական ոլորտից, այդ փաստաթուղթը, արտաքին քաղաքական դրդապատճառներով պայմանավորված, ուժի մեջ էր մտել ավելի քան երեք տարվա հապաղումով՝ 1999-ի հուլիսի 1-ին: Եվրամիության հետ համագործակցությունը փաստորեն դարձել էր Հայաստանի արտաքին քաղաքականության կարեւոր ուղղություններից մեկը:

Ի շարունակումն այդ գործընթացի, շուրջ տասը տարի անց Հայաստանը միացավ ԵՄ հետ հարաբերությունների կարգավորման նոր ձեւաչափին՝ Արևելյան գործընկերությանը, մի նախաձեռնություն, որը վերաբերում է հետխորհրդային տարածքի երկրների՝ Հայաստանի, Ադրբեյջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հարաբերությունների շրջանակին: Ռուսաստանը հրաժարվեց միանալ այդ շրջանակին՝ պնդելով Ռուսաստան-Եվրամիություն երկկողմ համագործակցության ձեւաչափը, որը չընդունվեց: Հայաստանը, կարելի է ասել,

ների աչքի փուշը տեսնելուց բացի, ըստ երեւոյթին սկսել է տեսնել կամ զգալ նաև իր աչքի գերանը: Այդ թվում, բնականաբար, նաև Հայաստանի անդամակցության խնդրում: Մերժելով Երեւանի ասոցացումը, Բրյուսելը, անշուշտ, ոչինչ չի շահել, թեկուզ այդ ընթացքում շարունակվում էին երկկողմ հարաբերությունները, այսպես ասած, անգլիական ժպիտի պայմաններում: Ըստ երեւոյթին, երրորդականում վերջապես հստակ գիտակցեցին, որ Հայաստանն անկեղծ է ինչպես ԵԱՏՄ անդամ պետությունների, այնպես էլ երրորդական երկրների ու կառույցների հետ իր հարաբերություններում և հետամուտ է բացարձակապես փոխշահավետ համագործակցության: Ինչու՞ չէ, կարելի է պնդել՝ նաև տեսնել Հայաստանի հետ համագործակցության կայուն կապերի աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային նշանակությունը թերազնահատելու իրենց մոլորությունը: Առավել ևս՝ հասկացան, որ համաժամանակ երկու միջազգային կառույցներին՝ Արևելյան գործընկերության և ԵԱՏՄ հետ Հայաստանի սերտ համագործակցությունը ոչ միայն չի հակասի ու խանգարի մեկը մյուսին, այլև, ընդհակառակը, կնպաստի այդ կառույցների խաղաղ համակենցությանը: Ավելին, Հայաստանը կարող է կամուրջ

մենայն դեպս, ի տարբերություն իշխանությունների, Ռուսաստանի փորձագիտական շրջանակների արձագանքներն այս օրերին, մեղմ ասած, այնքան էլ բարյացակամ չեն:

ԵՄ ղեկավարներն այսօր իրենք են բացահայտ հայտարարում, որ Հայաստանը միակն է ԵԱՏՄ անդամներից, որը Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր է ստորագրել Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում: Այսինքն, կարելի է հասկանալ, միակն է, հետեւապես՝ առաջինը, սակայն ոչ վերջինը: Այսինքն՝ Հայաստանն այսպիսով կարող է ճանապարհ բացել նաև ԵԱՏՄ անդամ եվրոպական տարածքի մյուս երկրների՝ Ռուսաստանի և Բելառուսի համար:

Արևելյան գործընկերության գագաթնաժողովին, ինչպես հայտնի է, մասնակցում էր եւս երկու ղեկավար և եկել նաև Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևը: Ինչպես սպասվում էր, իր ելույթում նա դարձյալ հիստորաբանում էր Հայաստանի հասցեին՝ մեղադրելով զավթողական և էթնիկ գոտման քաղաքականության մեջ, հիվանդ գառնացանքի պտուղ այլ մեղքերում: (Փակագծերի մեջ նշեց, որ գագաթնաժողովի ողջ ընթացքում Բելգիայի մայրաքաղաքում համաժամանակ տեղի էր ունենում ադրբեյջանցիների բողոքի ցույց՝ ընդդեմ Հայաստանի: Ադրբեյջանական լրատվամիջոցների տվյալներով՝ ցուցարարների թիվը հասնում էր 250-ի, եթե այդքան էր իրոք: Նկատի առնելով, որ Բելգիայում հիմնականում հաստատված են Ադրբեյջանի իշխանությունների հալածանքներից մազապուրծ քաղաքացիները, ուստի կարելի է ենթադրել, որ Իլհամ Ալիևը եթե ոչ իր նախագահական ինքնաթիռով, ապա այլ օդային թռիչքներով Բաքվից հատուկ Բրյուսել է բերել առնվազն այդքան թվով ճշանակալի ցուցարարների՝ Եվրոպայի սրտում հակակցության կարգախոսեր գոռոզալու համար, ընդ որում՝ ճշտիվ նույն մոտիվներով, ինչպիսիք Ադրբեյջանի նախագահի ելույթի «մեղադրանքներն» էին):

Բնականաբար, գագաթնաժողովում ինչպես հերյուրանքներին հակադարձվել է նաև ՀՀ նախագահի պատասխանը: Հայտարարելով, որ ադրբեյջանա-դարաբաղյան հակամարտության լուծումն առանց Արցախի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի իրացման պարզապես անհնար է, նա մասնավորապես անդրադարձել է նաև 90-ականներին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունված բանաձեւերի կապակցությամբ Ալիևի ներկայացրած պահանջներին: «Միավորված ազգերի կազմակերպությունը երբեք բանաձեւ չի ընդունել Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման մասով: 1993թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված չորս բանաձեւերը վերաբերել են Լեռնային Ղարաբաղի հատվածում ռազմական գործողությունների դադարեցմանը, ինչից Ադրբեյջանը հրաժարվել է: Եվ հիմա՝ 25 տարի հետո, խոսել այն մասին, որ Հայաստանն իր պարտավորությունները չի կատարում, կարծում եմ՝ այժմեական չէ»:

Արդյո՞ք Ադրբեյջանի նախագահը լիովին ընկալեց «այժմեական չէ» արտահայտության ենթատեքստը, որ եթե վերծանելու լինեց, ապա կնշանակի մեկ բան միայն՝ «գլուխ մի տար քո մուղամով»: Երեւի թե՛ ոչ: Զանգի տուն դառնալուց և կամ մեկ այլ արտերկրյա այցի գնալուց՝ նա դարձյալ, խաշնարած նախնայաց հանգով, իր քոչն է քշելու՝ քթի տակ դնելով միեւնույն միալար մուղամը: Բայց դա մեր խնդիրը չէ: Ի վերջո, ամեն ժողովուրդ ինքն է ընտրում և, անշուշտ, իր իսկ ընտրած նախագահին է արժանի:

Սիդայել ՀԱՋՅԱՆ



հիմնականում պատրաստ էր ստորագրելու Եվրամիության հետ ասոցացմանը՝ Արևելյան գործընկերության շրջանակներում: Մինչ այդ, որպես պարտադիր պայման, նախապես բարեփոխումների էր ենթարկվում Հայաստանի գործող օրենսդրությունը՝ երրորդական օրենսդրական դաշտի չափանիշներին համապատասխանեցնելու համար: Սակայն, ինչպես ասում են, շաբաթն ավելի շուտ եկավ, քան ուրբաթը կգար: Դարձյալ՝ պայմանավորված արտաքին քաղաքական դրդապատճառներով: Եվ 2013-ի սեպտեմբերի 3-ից սկսած արդեն անկնհայտ պարզ էր, որ Արևելյան գործընկերության շրջանակի երկրների ղեկավարների առաջիկա՝ Ռիգայի գագաթնաժողովում Երեւանին չի հաջողվի ստորագրել այդ փաստաթուղթը: Բրյուսելը համաձայն չէր, որպեսզի Արևելյան գործընկերության անդամության թեկնածու երկիրը միաժամանակ անդամակցի նաև ԵԱՏՄ-ին, որին միանալու Հայաստանի համաձայնությունը, որ տրվել էր Մոսկվայում, այլևս քաղաքական օրակարգի գրեթե վճռված հարցերից էր:

Անցել է չորս աշուն: Այդ ժամանակահատվածում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացները, ինչպես ակնհայտ է, բացի քանակական փոփոխություններից, նաև որակական սրբագրումների են ենթարկվել: Հենց այդ համատեքստում է, որ Եվրամիությունը, ուրիշ-

հանդիսանալ այդ, կարելի է ասել, գրեթե հակամարտ կառույցների միջև: Մասնավորապես, արդի այնպիսի բարդ քաղաքական իրավիճակում, երբ հետզհետե ավելի ու ավելի են սրվում Արևմուտք-Ռուսաստան փոխհարաբերությունները, իսկ փոխադարձ պատժամիջոցները երկուստեք մղում են դեպի անկանխատեսելի առճակատման:

Առավել ևս, որ՝ ինչպես հայտարարել է Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը գագաթնաժողովից հետո՝ մամլո ասուլիսում, Արևելյան գործընկերությունն ուղղված չէ Ռուսաստանի դեմ և ոչ էլ մրցակցություն է Ռուսաստանի և Եվրամիության միջև, այլ իրական գործընկերություն ինքնիշխան երկրների միջև:

Առավել ևս, որ ԵԱՏՄ առաջնային դերակատարը՝ Ռուսաստանը, ի տարբերություն 2013-ի, կարծես թե ներկայումս հարգանքով է վերաբերվում ԵՄ-ի հետ Հայաստանի շրջանակային համագործակցությանը: Թե ինչքան կտելի Կրեմլի այդ վերադիտարկումը, դժվար է ասել: Թեկուզ ակնհայտ է, որ Մոսկվայում եւս բարեկաստ հեռանկար չեն տեսնում, այսպես ասած, «պատժամիջոցների փոխհրաձգության» մեջ եւ, կարելի է ենթադրել, հակված են Հայաստանի երկակի գործակցությունը եւս, ի շարս այլ ուղիների, դիտարկել իբրեւ շահեկան կապուղի Արևմուտքի հետ փոխհարաբերությունների հետագա մեղմացման խնդրում: Հա-

«Բերքառատ Արցախ»-ին 12.505.456 \$

Հարյուրավոր կիլոմետրեր ձգվող ճանապարհներ, բազմաթիվ ջրագծեր, կյանքի նոր որակ սահմանող դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, բնակարաններ եւ առանձնատներ: Այսպես, «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով համայն հայությունն ավելի քան քառորդ դար նեցուկ է կանգնում Արցախին:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոնն անցկացվում է նոյեմբերի 23-ին, եւ այս տարի կրում էր «Բերքառատ Արցախ» կարգախոսը:

Ինչպես «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի Արցախի գրասենյակի ղեկավար Վալերի Ղազարյանը, այս տարվա հասույթն ուղղվելու է Արցախում խորքային հորերի հորատմանը, նոր ոռոգման ցանցի կառուցմանն ու արեւային էներգայի կայանների (solar power stations) տեղադրմանը:

«Առաջին փուլում Ասկերանի եւ Մարտունու շրջաններում է իրականացվելու խորքային հորերի հորատումը: Իսկ արեւային էներգիայի օգտագործումը կիրառվելու է Շուշիի եւ Ասկերանի շրջաններում: Բոլոր համայնքային նշանակության շենքերը ապահովվելու են կայաններով, որը թույլ է տալու

արեւային էներգիայից էլեկտրական հոսանք ստանալ»,- մանրամասնել է Վալերի Ղազարյանը՝ ավելացնելով, որ այն խնայում է 90%-ից ավելի էլեկտրաէներգիա:

Քարին տակ գյուղում արեւային ջրատաքացուցիչներ են տեղադրվելու բոլոր բնակելի տներում: «Գյուղերի ընտրությունը պատահական սկզբունքով է կատարվել՝ փորձի ձեռքբերման նպատակով: Համոզված ենք, որ այն հաջողությամբ կշարունակվի մյուս շրջաններում եւս»,- նշել է Հիմնադրամի Արցախի գրասենյակի պատասխանատուն:

Այս տարվա հեռուստամարաթոնին արձանագրվել է 12.505.456 ԱՄՆ դոլարի նվիրատվություն եւ նվիրատվության խոստում: Հավաքագրված գումարն, ըստ Վալերի Ղազարյանի, բավական կլինի նախատեսված ծրագրերն իրականություն դարձնելու համար:

Բացի վերոնշյալ ծրագրերից, շարունակվելու են նախորդ տարիներին սկսված աշխատանքները: Խոսքը վերաբերում է համայնքային կենտրոնների, դպրոցների, բազմազան ընտանիքների համար նախատեսված առանձնատների շինարարությանը եւ այլ նպատակային ծրագրերին:

Ըստ Վալերի Ղազարյանի՝ 2017թ. շահագործման են հանձնվել 2 մանկապարտեզ, 3

համայնքային կենտրոն, 5 համայնքային կենտրոնների վերակառուցման աշխատանքները դեռ շարունակվում են: «Շահագործման են հանձնվել Սոսի, Ուղտասարի դպրոցները, Ստեփանակերտի թիվ 9 դպրոցի մի մասնաշենքը՝ սպորտահիլիճի հետ միասին: Ավարտվել են Ուռուցքաբանական հիվանդանոցի կառուցման աշխատանքները»,- նշել է Վալերի Ղազարյանը:

Տարվա ընթացքում հանրապետության տարբեր շրջաններում 11 բազմազան ընտանիքների տուն է հատկացվել, 12-ում՝ ներկայումս շինարարությունը շարունակվում է: «2016թ. ապրիլյան պատերազմից հետո Թալիշում բավականին մեծ աշխատանքներ են տարել, որոնց մի մասը դեռ շարունակվում է: Հիմնադրամի միջոցներով վերանորոգվել է Մատաղիսի դպրոցը»,- հավելել է Վալերի Ղազարյանը:

Ըստ Վալերի Ղազարյանի՝ 2018թ. նախատեսվում է սկսել ԱրՊՀ հիմնական մասնաշենքի վերակառուցման աշխատանքները: Այն բավականին ծավալուն ծրագիր է՝ 2-3 տարվա ընդգրկմամբ, եւ իրականացվելու է անանուն բարերարի նվիրատվությամբ:

Հավելենք, որ հեռուստամարաթոնն ամեն տարի իրականացվել է ԱՄՆ Լոս Անջելես



քաղաքում: Գործունեության 25 տարիների ընթացքում Հիմնադրամը մոտ 700 000 նվիրատուների շնորհիվ ավելի քան 50 000 ծրագիր է իրականացրել Հայաստանում եւ Արցախում՝ ընդհանուր 350 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ: Կառուցվել, վերակառուցվել եւ իրականացվել են ավելի քան 605 կմ ճանապարհ, 580 կմ ջրագիծ ու ջրատար, 149 կմ գազամուղ, 70 կմ էլեկտրագիծ, 359 դպրոց եւ մանկապարտեզ, 24 համայնքային կենտրոն, 500 տուն են բնակարան, 75 առողջապահական հաստատություն, 58 մշակութային ու սպորտային կենտրոն, 100 շենք, 169 կրթական, մշակութային ու գիտական ծրագրեր:

Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱԼ

Արցախի զարգացման հետ կապված բազմաթիվ հարցեր քննարկվեցին



տուցել քաղաքագիտական վերլուծական քննարկումներ, ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային հիմնախնդիրների մասին: Խորհրդաժողովին մասնակցում էին տարբեր երկրներից հայ համայնքի եւ Հայ Դատի գրասենյակների ներկայացուցիչներ՝ Լիբանան, Սիրիա, Իրաք, Թուրքիա, Իրան, Հայաստան, Արցախ:

Թեհրանի «ՀՈՒՍԿ» (Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոն) հաստատության եւ միջազգային հարաբերությունների իրանական կենտրոնի հրավերով խորհրդաժողովին մասնակցում էր նաեւ Արցախի ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ Արցախի ԿԿ անդամ, պատմաբան Վահրամ Բալայանը:

«Առաջին օրը իրանցի շուրջ 250 փորձագետների, քաղաքագետների, ուսանողների մասնակցությամբ ծավալվեցին քննարկումներ՝ տարածաշրջանային զարգացումների՝ տվյալ պարագայում Արցախյան հիմնահարցի, դրա կարգավորմանը Իրանի մասնակցության վերաբեր-

յալ»,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է Վահրամ Բալայանը եւ ավելացրել, որ իրանական լսարանի համար հանդես է եկել գեկույցով՝ «ԼՂ հակամարտություն. տարածաշրջանի գերտերությունների դերակատարությունը» թեմայով: «Բազմաբնույթ քննարկումներ ծավալվեցին քրդական հարցի, տարածաշրջանի վրա դրա ազդեցության, Եվրամիության, Եվրասիական տնտեսական համագործակցության հետ կապված հարցերի վերաբերյալ, առաջարկություններ հնչեցին հայ-իրանական համագործակցության համատեքստում՝ խորացնելու երկու երկրների բարեկամությունը, ամրապնդելու Արցախի հետ կապերը»,- մանրամասնել է Վահրամ Բալայանը:

«Խորհրդաժողովի երկրորդ եւ երրորդ օրը տեղի ունեցան Հայ Դատի հանձնախմբի ժողովներ հայ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ քննարկվեցին տարածաշրջանային զարգացումների հարցերը, ուրվագծվեցին

մտակա ժամանակահատվածում Հայ Դատի գրասենյակների գործունեության ոլորտները»,- տեղեկացրել է Վահրամ Բալայանը՝ հավելելով, որ Արցախի զարգացման հետ կապված բազմաթիվ հարցեր քննարկվեցին, որոնք պետք է գործնական հողի վրա դրվեն:

Խոսքն առաջին հերթին վերաբերում է տնտեսական ծրագրերի իրագործմանը, Արցախում մանր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը, վերաբնակեցման քաղաքականությանը նպաստելուն, բազմազան ընտանիքների խրախուսմանը, գոհված ազատամարտիկների ընտանիքների աջակցությանը եւ կրթական, ուսումնական ծրագրերի հետ կապված հարցերին: «Սրանք բազմաբնույթ գործնական հարցեր են, որոնք, կարծում եմ, հետագայում կնպաստեն Արցախի կայացմանը եւ ընդհանուր առմամբ Սփյուռք-Արցախ համագործակցության ուժեղացմանը»,- եզրափակել է Վահրամ Բալայանը:

Բակո Սահակյանը եւ կառավարության անդամները պատասխանել են պատգամավորների հարցերին

Արցախի Հանրապետության նոր Սահմանադրության եւ ԱՀ Ազգային Ժողովի նոր կանոնակարգ օրենքի համաձայն՝ արդեն երկրորդ անգամ Ազգային ժողովում ընթանում է հանրապետության նախագահի եւ կառավարության անդամների հետ պատգամավորների հարցուպատասխանի ընթացակարգ: Նոյեմբերի 30-ին կայացած Արցախի Հանրապետության հերթական լիազումար նիստի ընթացքում ԱՀ ԱԺ 11 պատգամավորների կողմից բարձրացվել է 18 հարց, որոնց վերաբերյալ պարզաբանումներ են տվել ԱՀ նախագահ Բակո Սահակյանը եւ տվյալ ոլորտների պատասխանատուները: Ստորեւ ներկայացնում ենք «Դաշնակցություն» խմբակցության կողմից ԱԺ ամբիոնից բարձրաձայնված հարցերը:

«Դաշնակցություն» խմբակցության անունից պատգամավոր Լեռնիկ Հովհաննիսյանը երկու հարց է հնչեցրել: Առաջինը վերաբերում էր շրջկենտրոններում՝ մասնավորապես Մարտունի եւ Բերձոր քաղաքներում գազաֆիկացման շարունակականությանը. հարցը բարձրացվել է բնակչության հետ խմբակցության հանդիպումների ժամանակ: Երկրորդ հարցին ի պատասխան, որը վերաբերում էր աշակերտների թվի աճի հետ կապված դպրոցներում դասասենյակների ավելացման, սպորտահիլիճների խնդիրներին, ԱՀ քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանը նշել է, որ յուրաքանչյուր տարի պետական բյուջեով զգալի գումարներ են հատկացվում կրթության համակարգի պայմանների բարելավմանը: «Դպրոցաշինության հարցը քննարկում ենք ԿԳՍ նախարարության հետ, ըստ մեր հնարավորությունների կազմում յուրաքանչյուր տարվա ծրագիրը»,- ավելացրել է քաղաքաշինության նախարարը: Ինչ վերաբերում է գազաֆիկաց-

ման մասին հարցին, ապա, ըստ Կարեն Շահրամանյանի, հնարավոր է, որ դրանք սակավաբան թաղամասեր լինեն, քանի որ այդպիսի դիմումներ նախարարությունը չի ստացել: Քաղաքաշինության նախարարը խոստացավ ուսումնասիրել հարցը եւ տալ կոնկրետ պատասխան:

Պատգամավոր Ալյոշա Գաբրիելյանի բարձրաձայնված հարցն ուղղված էր Բակո Սահակյանին: Այն վերաբերում էր Արցախում քրեակատարողական հիմնարկներին, որոնք աշխարհի շատ պետություններում, այդ թվում՝ նաեւ ՀՀ-ում, գտնվում են արդարադատության նախարարության կազմում, իսկ ԱՀ-ում՝ ոստիկանության համակարգում:

Նախագահ Բակո Սահակյանը, պատասխանելով հարցին, նշել է, որ աշխատանքային քննարկումների արդյունքում այն եզրակացության են եկել, որ դեռեւս պատրաստ չենք այդ հաստատությունները արդարադատության համակարգ տեղափոխելուն:


Պատգամավոր Դավիթ Իշխանյանը նշել է, որ շուտով տոնվելու է Արցախյան շարժման 30-ամյակը, որի հետ գրեթե նույն տարիքն ունեն փախստականների վերաբերող ցավոտ հարցերը, մասնավորապես՝ վերջիններիս բնակարաններով ապահովելու հարցը: Հարցը բազմիցս բարձրացվել է Ասկերանի, Մարտունու եւ Մարտակերտի շրջաններում՝ պատգամավորական այցելությունների եւ ընտրողների հետ հանդիպումների ժամանակ:

ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի եւ վերաբնակեցման նախարար Սամվել Ավանեսյանը, պատասխանելով հարցին, նշել է, որ մի քանի տարի է, ինչ տվյալ ոլորտում մոտեցումները վերանայվում են. փախստականի կարգավիճակ ունեցող բազմաթիվ ընտանիքներ օգտվել

են Սոցիալական ծրագրերի հիմնադրամից: «Վերաբնակեցման քաղաքականության ակտիվացման շրջանակներում նախատեսվում է լայնածավալ բնակարանաշինություն, որը նաեւ կուղղվի այդ խնդիրների լուծմանը: Նաեւ ունենք բնակարանների վարձավճարի փոխհատուցման ծրագիր, որի գումարները 2018թ. բյուջեով նախատեսվում է ավելացնել, եւ հնարավոր է, որ շահառուների խմբերը վերանայվեն կամ ավելացվեն, որը կվերաբերի նաեւ փախստականներին»,- հավելել է Սամվել Ավանեսյանը:

Պատգամավոր Վահրամ Բալայանը ողջունել է վերջին տարիներին այգեգործության զարգացման հետ կապված միջոցառումները, այդ թվում՝ տնկիների ձեռքբերումը: Վահրամ Բալայանին մտահոգում էր խաղողագործության ոլորտի նկատմամբ պետական ուշադրության պակասը: Ըստ Վահրամ Բալայանի՝ գյուղատնտեսության մեջ խաղողագործությունն ավանդական ճյուղ է, որը լուծում է նաեւ գյուղաբնակ ընտանիքների ապրուստի խնդիրները: Պատգամավորի առաջարկն է, որպեսզի տնկիների ձեռքբերումը բաժին հասնի նաեւ խաղողագործության ասպարեզին:

Գյուղատնտեսության նախարար Ժիրայր Միրզոյանը նշել է, որ այգեգործության զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է նաեւ խաղողագործությունը: «Ունենք խաղողի տնկիների ձեռք բերման, նաեւ խաղողագործության զարգացման ուղղված հայտեր, մասնավորապես՝ սեղանի սորտերի եւ գինու որոշ տեսակների խաղողի տնկիների ձեռք բերման: Իհարկե, կապված պահանջարկի հետ, ընդհանուր այգեգործության քանակի մեջ որոշ նվազում ունենք, բայց նոր սորտեր ձեռք բերելու ծրագիրն Արցախում շարունակվում է»,- ասաց նա:



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Քաղաքական կամքի դրսևորման պահ

Նոյեմբերի 10-ին Վիեննայում հանդիպեցին Պուտինն ու Թրամփը: Հանդիպումից հետո տարածված հայտարարությունը վերաբերում էր միայն երկու երկրների համաձայնությանը Սիրիայի հարցերի կապակցությամբ, Սիրիայի ամբողջականությունը պահպանելուն: Սա սառցաբեկորի միայն երեւացող մասն է: Խորքային իմաստով երեւում է, որ ԱՄՆ ու Ռուսաստանը Վիեննայում ձեռք են բերել նաեւ այլ համաձայնություններ, որոնք չեն շրջանցել մեր տարածաշրջանը եւս:

Քաղաքական իրադարձությունները ցույց են տալիս, որ Ռուսաստանը դուրս է գալիս մինչ այս միջազգային մեկուսացման մատնված իր դիրքից եւ ստանձնում է անմիջական դերակատարություն տարածաշրջանային իրողություններում: Վերը նշվածի վկայությունը Սոչիում կայացած՝ Ռուսաստան-Թուրքիա-Իրան համաձայնությունն է Սիրիայի վերաբերյալ, Լավրովի այցը Ադրբեջան եւ Հայաստան, ինչպես նաեւ երկու շաբաթվա ընթացքում Պուտինի երկու հանդիպումներն են Թուրքիայի նախագահի հետ:

Այս իրողությունների համայնապատկերում ուշագրավ է նաեւ անցյալ շաբաթ տեղի ունեցած Հայաստան-Եվրամիություն համաձայնագրի ստորագրումը, իսկ դրան զուգահեռ՝ զանազան կետերից հայանապատ հայտարարությունների, ազդակների փոխանցումը:

Կարծես թե Հայաստանին տրվում է յուրահատուկ դեր՝ տարածաշրջանային իմաստով: Փոխվում է սովորական դարձած հարաբերությունների մակարդակը, նոր խնդիրներ են առաջ քաշվում, տրվում են նոր «առաջադրանքներ»:

Հայկական քաղաքական դաշտը ուրախ է այն բանից, որ այս փուլում եւս կարողացանք պահպանել ներկա իրավիճակը՝ ստատուս քվո:

Անդրադառնալով մերորյա պատմությանը եւ դասեր քաղելը ոչ հեռու անցյալից:

Նման իրավիճակի դեմ-հանդիման էր կանգնած Արցախը 1994-95 թվականներին: Հրադադարի հաստատմամբ ստեղծվել է մի կացություն, որտեղ ստեղծված իրավիճակը պահպանելու համար միջազգային դերակատար ուժերը եւ, նրանց հետ համահունչ, Հայաստանի իշխանությունները համաձայնել էին, որ Արցախի եւ Ադրբեջանի սահմանին տեղակայվեն խաղաղապահ զորքեր: Այդ օրերին Արցախը իր վճռական «ոչ»-ն ասեց՝ մերժելով խաղաղապահ ուժերի տեղակայման առաջարկը: Ավելի քան 20 տարի է անցել այդ օրերից: Սահմանային իրավիճակը, որտեղ պետք է տեղակայվեին խաղաղապահները, մնացել է նույնը:

94-95 թվականներին Արցախն իր որոշմամբ բուրիս պարտադրեց, որ հարգեն Արցախի որոշում կայացնելու իրավունքը: Կասկածից վեր է, որ 20 տարիների ընթացքում խաղաղության պահպանումը եւ Արցախը որպես դե ֆակտո երկրի կայացումը կախված է հենց այդ քաղաքական կամք դրսևորող կեցվածքից:

Միջազգային բեմահարթակում տեղի ունեցած վերջին իրադարձությունները եւ հարաբերությունների ճշտումը Հայաստանին վերապահել է յուրահատուկ դերի ստանձնում: Հայաստանը կամա թե ակամա ստանձնում է Ռուսաստան-Ամերիկա հարաբերությունները կամրջող օղակներից մեկը: Դա հայկական աշխարհին տալիս է յուրահատուկ հնարավորություն, իսկ հնարավորությունից չօգտվելու պարագայում վտանգվում է ամեն ինչ: Հայկական աշխարհին տրված այս դերակատարությունը ստանձնելու առիթը չպետք է ծառայի այլ բանի, քան հայկական զույգ պետությունների ինքնիշխանության եւ անկախության ամրապնդմանն ու զարգացմանը:



## Արցախի Հանրապետության նախագահը Ֆրանսիայում

Նոյեմբերի 19-25-ը Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն աշխատանքային այցով գտնվում էր Ֆրանսիայի Հանրապետությունում:

Նոյեմբերի 19-ին Բակո Սահակյանը Փարիզում այցելել է Ֆրանսիայում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կազմակերպված հեռախոսամարաթոնի կենտրոն, հանդիպել հիմնադրամի տեղական կառույցի պատասխանատուների եւ գործընթացում ընդգրկված երիտասարդ կամավորների հետ: ԱՀ նախագահը նոյեմբերի 20-ին ժամանել է Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաք եւ մասնակցել Ալֆորվիլի ու Բերնորի միջեւ բարեկամության հռչակագրի ստորագրման հանդիսավոր միջոցառմանը:

Իր խոսքում նախագահ Սահակյանը բարեկամության հռչակագրի ստորագրումը որակել է որպես Արցախի համար նշանակալի իրադարձություն քաղաքական, իրավական ու բարոյական տեսանկյուններից, ինչն առաջին հերթին բարեկամ երկրի՝ Ֆրանսիայի

հետ կապերի ամրապնդման եւ զարգացման կարեւոր հիմքերից է:

Նախագահի խոսքով՝ Ալֆորվիլ քաղաքի հետ փոխգործակցության ընթացքում արդեն իսկ արձանագրվել են հիշատակման արժանի դրվագներ, եւ այս համատեքստում Բակո Սահակյանը նշել է 2016 թվականի սեպտեմբերին քաղաքապետ Լյուկ Կարվոնսաի գլխավորած պատվիրակության այցն Արցախ եւ Արիլյան պատերազմի օրերին Ալֆորվիլում տեղի ունեցած բազմամարդ ցույցը՝ ի սատարումն Արցախի ու ընդդեմ հարբեջանական բռնությունների: Արցախի Հանրապետության նախագահը նշեց, որ այս ամենը ողջ աշխարհին ցույց տվեց ագրեսիայի անընդունելի լինելը քաղաքակիրթ հանրության համար:

Բակո Սահակյանն ընդգծել է, որ Ալֆորվիլի եւ Բերնորի համագործակցությունն ունի խոստումնալից հեռանկարներ աշխատանքների ճիշտ կազմակերպման դեպքում՝ վստահություն հայտնելով, որ համատեղ ուժերով հաջողվելու է կյանքի կոչել բազմաթիվ ծրագրեր:

Ֆրանսիա կատարած այցելության շրջանակներում ԱՀ նախագահ Բակո Սահակյանը Ֆրանսիայի Հանրապետության Վիլյորբան քաղաքում մասնակցել է «Ֆրանսիայում Արցախի օրերի» մեկնարկին նվիրված հանդիսավոր միջոցառմանը, հանդիպում ունեցել Ֆրանսիա-Արցախ բարեկամության շրջանակի մի խումբ անդամների, Սեն Շամոն քաղաքի քաղաքապետի, տեղական իշխանությունների պատասխանատուների եւ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ինչպես նախկինում, այս անգամ եւս ԱՀ նախագահի արտասահմանյան այցը Բաքվում հիստերիայի պատճառ է դարձել: Պաշտոնական Բաքուն բողոք է հայտնել Արցախի նախագահ Բակո Սահակյանի՝ Ֆրանսիա կատարած այցի դեմ: Ադրբեջանի ԱԳՆ-ի տարածած հայտարարությունում նշված է, որ տվյալ հարցով Ադրբեջանի ԱԳՆ է կանչվել Բաքվում Ֆրանսիայի դեսպան Աուրելիա Բուշեզը:

### ՀՀ-ԵՄ. եվրախնտեզման գործընթաց

Անցած շաբաթվա քաղաքական անցուղարձում մեզ համար անհամեմատ նշանակալի իրադարձությունը, անշուշտ, Հայաստանի Հանրապետություն-Եվրամիություն Համաձայնագրի ստորագրումն էր, որ տեղի ունեցավ նոյեմբերի 24-ին՝ Բրյուսելում, Արեւելյան գործընկերության երկրների 5-րդ գագաթնաժողովի շրջանակներում:



### Լուռ հեղափոխություն եկք անում. Կորյուն Խաչատուրյան

Կյանքի փորձ ձեռք բերելու համար անհրաժեշտ է ապրել երկար տարիներ: Սակայն թունո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի երիտասարդ ղեկավար Կորյուն Խաչատուրյանի հետ կես ժամից քիչ տեսած զրույցը կարող է դաստիարակել, ուսուցանել եւ փոխել հաստատուն տեսակետներ:

